ԿՈՏՐՎԱԾ ՁՐԱՄԲԱՐՆԵՐ

Տե՛ր, հավատում եմ, Տե՛ր, հավատում եմ, Ամեն բան հնարավոր է, Տե՛ր, հավատում եմ:

Մի պահ կանգնած մնանք և խոնարհենք մեր գլուխները:

2 Տե՛ր Հիսուս, մենք փորձում ենք խոնարհությամբ այս երգով ասել Քեզ, որ հավատում ենք: Եվ խնդրում ենք, Տե՛ր, որ հիմա...որ շարունակես կոտրել Կյանքի Հացը մեզ համար, շնորհելով մեզ Քո Խոսքից այն, ինչի կարիքը մենք ունենք: Որովհետև մենք սա խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

3 Նստեք: Ես համոզված եմ, որ եթե մենք...եթե ես հիմա ասեի *«ամեն»* լիովին բավարար բառը, որ Աստծո շքեղ օրհնությունները կշարունակեն հանգչել այս լսարանի վրա:

4 Ես այս առավոտ նստել և ուշադիր լսում էի ծառայությունը, վայելում էի վկայությունները, թե ինչպես էր յուրաքանչյուրը տարբեր կերպ արտահայտվում: Եվ լսում էի նորեկներին, այստեղի մկրտական եղբորը, որ եկել էր ներողություն խնդրելու մի քիչ սխալ պատկերացնելու համար դա: Ես...ես անշուշտ գնահատում եմ մարդուն, մեկին, ով կարող է բավականին մարդկային, կամ...կամ ջենտլմեն լինել, եթե կարծում է, որ սխալ է գործել: Նա ոչ թե ինձնից է ներողություն խնդրել, ինձանից ներողություն չի խնդրել, այլ Աստծուց: Ուստի ես...ես գնահատում եմ դա, հասկանո՞ւմ եք: Թող Աստված օրհնի մեր եղբորը և իր ավետարանիչ եղբորը:

5 Այդ մկրտականը, դուք գիտեք, ես ինքս էլ մի ժամանակ մկրտական եկեղեցուն եմ պատկանել: Միսիոներական Մկրտական Եկեղեցու անդամ եմ եղել: Երբ ես գալիս եմ մարդկանց մեջ, գիտեմ, թե ինչպես եք ձեզ զգում: Ես էլ եմ նույն ձևս զգացել, պարզապես լի ես ինչ–որ բանով, որ ես... ես չգիտեի:

6 Ես հիշում եմ իմ առաջին փորձառությունը, երբ հանդիպեցի հոգեգալստականներին, դա Դովաջայում էր, Միչիգան...Ներողություն, Դովաջայում ձկնորսության էի գնացել, և Դովաջիակայից գալիս էի Ինդիանա:

Եվ ես տեսա բոլոր մեքենաների և իրերի վրա ամրացած «Հիսուս» անունը, և այդ օրը լսեցի նրանց ծառայությունները: Հաջորդ օրը նրանք ինձ խնդրեցին, որ հարթակ բարձրանամ և մի քանի խոսք ասեմ, ինչն էլ արեցի: Եվ ես...Նրանք ինձ հարցրեցին, թե որ եկեղեցուն եմ պատկանում, ես էլ նրանց ասացի, որ մկրտական եմ:

7 Այդ երեկո սևամորթ տարեց մի տղամարդ պետք է քարոզեր, նա պետք է որ ութսուն անց լիներ, և նա դուրս եկավ հարթակ: Նրանք համարյա ստիպված էին դուրս բերել ծերունուն: Նրա հագին երկար ծառայողական բաճկոն էր՝ թավշյա օձիքով, և ճերմակ մազերի օղակը շրջանակում էր նրա ծոծրակը: Ես մտածեցի. «Այստեղ եղող այս բոլոր տղամարդիկ և աստվածաբաններ, մեծ մարդիկ, ինչպե՞ս են նրանք թույլ տվել, որ ծառայությունը հանձնեն նման մարդուն: Դե, ծերունին պետք է ինչ-որ տեղ՝ ներքևում, աթոռին նստած լինի»:

8 Այդ օրը նրանք քարոզում էին այն մասին, թե ինչ արեց Հիսուսն այստեղ՝ երկրի վրա: Եվ...բայց նա իր թեման վերցրեց, կարծեմ դա Հոբի :7.20-ից էր, վստահ չեմ, արդյոք սուրբգրային այդ համարն էր: Ամեն դեպքում մեջբերումը սա է կամ դրա մի մասը. *«Ո՞ւր էիր՝ Ես երկրի հիմունքը դնելիս, առավոտյան աստղերը միասին ցնծալիս, և Աստծո բոլոր որդիքը երբ որ գովաբանում էին»:* Եվ նա խոսեց այն մասին, թե ինչ էր կատարվում Երկնքում, մինչ նրանք խոսում էին այն մասին, թե ինչ էր կատարվում երկրի վրա:

9 Եվ նրա քարոզից մոտավորապես հինգ րոպե անց, նա...Տիրոջ Հոգին հպվեց նրան, և նա ցատկեց հատակից ու կրունկները կոտացրեց: Ո՛հ, այնտեղ այնքան տեղ կար, համարյա այս հարթակի կեսի չափ. և նա իջավ, ասաց. «Այստեղ ձեզ մոտ տեղը չի հերիքում, որ ես քարոզեմ»:

10 Դե, ես այդ ժամանակ մոտ քսան տարեկան էի: Ես մտածեցի. «Եթե...եթե դա այդ բանն արեց այդ ծերունու հետ, ապա ի՞նչ կանի դա ինձ հետ»: Հասկանո՞ւմ եք:

11 Մեր նոր եղբայրների համար ամեն ինչ կարգուկանոնի մեջ պահելու համար, որ մենք անկասկած ողջունում ենք մեր հաղորդակցությունը: Ես տեսնում եմ, կարծեմ նրանք հիշեցրին այստեղ նստող քահանայի մասին. անշուշտ, լինելով իռլանդացի, իմ բարեկամները կաթոլիկ են: Եվ այնտեղ կար ևս մի երկուսը, մկրտականներ և այլոք: Դուք մի փոքր առաջ հնարավոր է շփոթված եք եղել: Ես նկատեցի, որ եղբայրներից ոչ մեկը չխոսեց այդ մասին,

բայց ես մտածեցի, որ կփորձեմ շտկել դա։ Երբ եղբայր Ծաքարյանը...Այն բանից հետո, երբ այստեղի հիանալի խոսողն այնքան լցված էր ուրախությամբ՝ իմանալով Տիրոջ Գալստյան այնքան մոտ լինելու մասին, նա... նա խոսեց մեզ հետ անծանոթ լեզվով։ Եվ մենք ունենք մեկնաբաններ, ովքեր տալիս են մեկնությունը։ Ինչի վերաբերյալ Սուրբ Գիրքն ասում է. «Եթե թարգմանող չկա, թող նրանք լռեն»։ Բայց եթե...եթե նրանք խոսում են լեզուներով, այնուհետև մեկնաբանում են դա, այն մարգարեություն է դառնում։ Այսպիսով մի փոքր շփոթություն որ...որ դրանցից երկուսը միաժամանակ։ Հիմա, դա ամենևին էլ շփոթեցնող չէր, հասկանում եք, որովհետև նրանցից մեկը մեկնություն էր տալիս, մյուսը՝ մարգարեանում էր։ Հասկանո՞ւմ եք։ Դրա համար դա...

12 Ես մտածեցի, որ կբացատրեմ մեր եղբայրներին, եթե նրանք չեն հասկացել, որովհետև նրանցից մեկը ճշգրտորեն տալիս էր...Նկատեցի՞ք յուրաքանչյուրի ժամանակային սահմանափակումները։ Իսկ մյուսն ինքն այնքան լցված էր, որ Աստծո Հոգին մարգարեանում էր նրա միջոցով. մեկնաբանում էր, մյուսը տալիս էր մեկնությունը։ Որպեսզի դա պարզ լինի, որ դուք...մենք չենք...Երբեմն բնական մտքի համար...Ճիշտ այնպես, ինչպես մեր թանկագին եղբայրը ներողություն խնդրեց այսօր առավոտյան։ Սա փոքր–ինչ շփոթեցնող է այն մարդու համար, ով չի հասկանում։ Բայց նրանց համար, ովքեր ներսում են, ճակատամարտի վետերաններին, որում մենք ենք գտնվում, մենք հասկանում եք դա, թե այս բաներն ինչ են։ Դրա համար ես մտածեցի, որ մի բան կասեմ դրա վերաբերյալ, եթե ամեն բան կարգին է։

13 Հիմա, ես...ես գիտեմ, որ սա այն տեղը չէ այս բանն ասելու համար։ Բայց քանի որ բոլորը մանրուքներ էին ասում, ես...Դուք գիտեք այդ տղամարդը՝ տարեց սևամորթ տղամարդն ասաց. «Այստեղ ձեզ մոտ տեղը չի հերիքում, որ ես քարոզեմ»։ Դուք բավականին *ժամանակ* չունեք, որ ես քարոզեմ։ [Ժողովուրդը ծափահարում է։ Ծան. խմբ.]։ Բավականին ձգձգվում է։

14 Մի օր մի մարդ ասաց. «Մի սպասավոր է գալիս, ով քսան տարի եկեղեցու հովիվ է լինում։ Նա իր եկեղեցում ամեն կիրակի առավոտ միշտ քարոզում է ուղիղ երեսուն րոպե»։ Եվ նա ասաց. «Այդ կիրակի առավոտ նա քարոզեց երեք ժամ»։

15 Սարկավագների խորհուրդը կանչում է նրան և

ասում. — Հովիվ, մենք իսկապես գնահատում եք ձեզ,— ասում են,— մենք գիտենք, որ...որ դուք կանգած եք Աստվածաշնչի և Իր իրավունքների համար: Իսկ հետո ասում են. — Դուք միշտ ուղղում եք մեզ, որ կարողանանք Աստծո առջև մաքուր և անարատ զգալ մեզ: Եվ մենք իսկապես գնահատում ենք ձեզ և հավատում ենք, որ դուք Աստծո ծառան եք: Եվ անշուշտ գնահատում ենք այս առավոտվա պատգամը, բայց,— ասում են,— մեկ բան կա, որ ուզում ենք ձեզ հարցնել,— ասում են,— որպես սարկավագների խորհուրդ մենք ժամ ենք պահում,— ասում են,— ամեն կիրակի առավոտ դուք քարոզում եք ուղղիղ երեսուն րոպե, իսկ այսօր երեք ժամ,— ասում են,— հիմա, հիշում եք, մենք գնահատում ենք այդ ամենը: Ամեն ինչ կարգին էր: Իրեն լավ զգալու համար են ասում, գիտեք:

16 Նա ասում է. — Դե, եղբայրներ, ես ձեզ կասեմ, թե ինչպես է դա, — ասում է,— ամեն առավոտ երբ ես գնում եմ...կանչում են ինձ ամբիոնի մոտ,— ասում է,— ես բերանիս մեջ դնում եմ ինչ-որ անանուխի կոնֆետ,— ասում է նա,— և այս ու այն կողմ եմ տանում,— ասում է,— երբ անանուխը հալվում է,— ասում է,— դա տևում է երեսուն րոպե— ասում է,— այդ ժամանակ դադարում եմ քարոզել,— ասում է,— գիտեք, այսօր կարծում եմ, ես մի փոքր երկար խոսեցի: Ես այն թքեցի, պարզվեց բերանիս մեջ կոճակ էր:

17 Ես չեմ պատրաստվում բերանիս մեջ որևէ բան դնել, ուստի մենք հուսով ենք, որ գրպաններում կոճակներ չունենք: Բայց մենք...Հուսով եմ դա այստեղ սրբապիղծ չի հնչել: Բայց ես պարզապես...Դուք գիտեք, որ նույնիսկ Աստված հումորի զգացում ունի, գիտեք:

18 Ուստի մենք շատ շնորհակալ ենք այստեղ լինելու և այս հաղորդակցության ժամն ունենալու համար, և...և իմ այս փոքրիկ հասարակ կերպով այս մեծ առանձնաշնորհումով ևս մեկ անգամ Կյանքի Հացը կոտրելու համար: Ես գիտեմ, քանի որ աստվածաբաններ, այդ մարդը, որ Անգլիայից խոսեց այստեղ անցած երեկո. օհ, անհարմար եմ զգում նման մարդուց հետո բարձրանալ իմ յոթամյա կրթությամբ: Բայց ես հույս ունեմ, որ Աստված կմեկնաբանի ձեզ իմ սրտում եղածի իմաստը: Հասկանո՞ւմ եք: Եթե իմ խոսքերը, մտադրությունները ճիշտ չեն, ես...ես հույս ունեմ, որ ճիշտ են:

19 Եկեք հիմա կարդանք Սուրբ Գրքից: Ձեզանից շատերը

սիրում են հետևել: Ես այսօր կկարդամ ընդամենը մի քանի րոպե Երեմիա մարգարեի գրքից, երկրորդ գլուխ, և կսկսեմ հիմա առաջին համարից:

Եվ Տիրոջ խոսքն եկավ ինձ՝ ասելով.

«Գնա՛, Երուսաղեմի ականջներին կանչի՛ր ու ասա՛. «Այսպես է ասում Տերը՝ Հիշեցի քեզ, քո երիտասարդության քաղցրությունը և քո հարսնության սերը, անապատում՝ այն չսերմանված երկրում, Իմ ետևից գալդ:

Իսրայելը Տիրոջ համար սրբություն էր, Նրա արդյունքի երախայրին. բոլոր նրանք, ովքեր կուլ են տալու նրան և հանցավոր են համարվելու, չարիք է գալու նրանց վրա»,— ասում է Տերը:

Լսեցե՛ք Տիրոջ խոսքը, ո՛վ Հակոբի տուն և Իսրայելի տան բոլո՛ր ազգատոհմե՛ր.

այսպես է ասում Տերը. «Ձեր հայրերն ի՞նչ անիրավություն գտան իմ մեջ, որ հեռացան Ինձանից, ունայնության հետևեցին ու ունայն դարձան:

Չասացին էլ. «Ո՞ւր է Տերը, որ մեզ հանեց Եգիպտոսի երկրից և առաջնորդեց մեզ անապատում, ամայության ու փոսերի երկրում՝ չորության ու մահվան ստվերի երկրում, այնպիսի մի երկրում, որտեղով մարդ չէր անցնում, և... մարդ չէր բնակվում»:

Ես ձեզ բերի մի բերքառատ երկիր՝ ուտելու նրա պտուղն ու նրա բարիքը. բայց երբ մտաք, Իմ երկիրն անմաքուր դարձրիք և Իմ ժառանգությունը պղծության վերածեցիք:

Եվ *քահանաները չասացին. «Ո՞ւր է Տերը», և օրենքն իրենց ձեռքում պահողներն Ինձ չճանաչեցին:* Եվ *հովիվներն ապստամբեցին իմ դեմ, իսկ մարգարեները Բահաղով մարգարեացան և անօգուտ բաների ետևից ընկան:*

Դրա համար ես...վիճելու եմ քեզ հետ,— ասում է Տերը,— և ձեր որդիների որդիների հետ եմ վիճելու,

արդ...ցե՛ք կետացիների կղզիներն ու տեսեք և մա՛րդ ուղարկեցեք Կեդար ու մի լավ ստուգեք այն *ու տեսեք, թե եղե՞լ է այսպիսի բան:*

Թե արդյոք մի ազգ փոխե՞լ է իր աստվածներին, թեև դրանք աստվածներ չեն. սակայն Իմ ժողովուրդն իր փառքը փոխել է մի այնպիսի բանով, որ օգուտ չունի:

Ո՛վ երկինքներ, զարմացե՛ք այս բանի վրա, սոսկացե՛ք, ապշա՛ծ մնացեք,— ասում է Տերը,—

քանի որ Իմ ժողովուրդը կրկնակի չարություն գործեց. Ինձ՝ կենդանի ջրերի աղբյուրիս, լքեցին, որպեսզի իրենց համար ջրամբարներ հորատեն, կոտրած ջրամբարներ, որոնք ջուրը չեն կարող պահել:

20 Թող Տերն ավելացնի Իր օրհնությունները Իր Խոսքի ընթերցմանը: Այստեղից եմ ուզում վերցնել թեման՝ *«Կոտրված ջրամբարներ»:*

21 Առավոտյան սուրբգրային այս համարը կարդալիս, որը...ողջ Սուրբ Գիրքը տրված է ներշնչանքով: Եվ մենք եկել ենք Տիրոջ Տուն ուղղվելու և հասկանալու համար: Եվ երբեմն, որ տեսնում ենք...ցանկացած փոքր բան ճանապարհին:

22 Այս զինվորականի նման, ով քիչ առաջ դիմում էր մեզ և ասում, որ որոշ բաներ, որ գուցե ինչ-որ այլ երկրում որոշակի հրթիռ կա, կամ...կամ դրա նման մի բան, և մենք պետք է ինչ-որ մի բան գտնենք ռազմական մարտավարությամբ այն չեզոքացնելու համար:

23 Նույն բանն էլ գալիս է եկեղեցում, եկեղեցական ծխում, որտեղ մարդը քարոզում է, կամ էլ եթե նա ավետարանիչ է դաշտում: Երբ նա տեսնում է ապստամբություններ և մի բան, որ նոր է սկսվում, ընթանում է, դեռ սաղմի մեջ է, կամ ինչ էլ որ լինի, այդ մարդն է, որ, եթե նա Աստծո ծառա է, պետք է արգելափակի մարդկանց մտքերից այնպես, որ նրանք հեռու մնան դրանից: Եվ մենք չենք ուզում դա պատահի, որ նման վիճակում հայտնվենք:

24 Հիմա, այստեղ Երեմիայի ժամանակ, նրա մարգարեությունը, դա Եսայիայի...Եսայիայի մահից մոտավորապես վաթսուն տարի հետո էր: Եվ մոտ վաթսուն տարի նրանք առանց հիմնական մարգարեի էին: Եղել է Ամբակումը և փոքրիկ կրտսեր մարգարեներից էլի ինչ-որ մեկը, բայց Եսային վերջին ավագ մարգարեն

էր: Եվ այս ժամանակվա ընթացքում մարդիկ չեն ունեցել որևէ մեկին, ով դուրս կանչի նրանց: Նրանք հոսանքով լողում էին: Թեև նրանք Աստծո ժողովուրդ էին, բայց հայտնվեցին այս վիճակում, որում...որում տեսնում ենք նրանց, երբ Երեմիան եկավ նրանց մարգարեանալու: Եվ Երեմիան նույնպես...Նա մարգարեացավ աքսորից առաջ և ինքն էլ նրանց հետ աքսորվեց:

25 Այնուհետև, անշուշտ, Երեմիայից հետո եկավ Դանիելը: Եվ Դանիելն ասաց, որ նա գիտություն ուներ Սուրբ Գրքով յոթանասուն տարիների վերաբերյալ, որ նրանք պետք է լինեին այնտեղ:

26 Իհարկե, նրանց մեջ մեկ այլ մարգարե կար, ով ուզեց շինել այդ լուծը, երբ իր պարանոցին դրեց այն և ասաց, որ դա մի փոքրիկ իրադարձություն կլինի, որ երկու տարուց Աստված դրանց բոլորին հետ կբերի, բայց Երեմիայի իմացածը տարբերվում էր դրանից: Եվ մենք գիտենք, թե ինչ եղավ այդ մարգարեի հետ, ով սխալ մարգարեացավ, նա այդ նույն տարի մեռավ: Աստված թույլ չէր տա, որ նա մնար:

27 Մենք նաև նկատում ենք այդօրվա մարդկանց վիճակները: Ես հիմա չեմ ուզում, որ դուք ինձ սխալ հասկանաք, ես...ես մտադրված չեմ...այն, ինչ մտադրված եմ այստեղ ասել, սուրբգրային մի քանի համարներ և փոքրիկ նշումներ:

28 Մի ժամանակ ես ստիպված չէի սուրբգրային համարները և այլն գրառել: Բայց քսանհինգս կրկնակի լրանալուց հետո ես...ես արդեն առաջվա պես չեմ հիշում, դրա համար գրի եմ առնում սուրբգրային համարը և դրանից իմանում եմ, թե ուր եմ ընթանում: Բացի այդ, այդքան ժամանակ աղոթում եմ հիվանդների համար և այլն, դուրս եմ գնում, ժամանակ չունեմ ինչպես հարկն է ուսումնասիրել:

29 Հիմա, բայց այդ օրվա մեծ մարգարեն՝ Երեմիան էր, և նա Ամովսի և մնացած մի շարք այլ մարգարեների կարգի էր, ովքեր վեր էին ելել: Նա խառնվեց, երբ տեսավ ազգի վիճակը: Հիմա, կային վայրեր...

30 Երբեմն, երբ խոսում ես ազգի մասին, գուցե մտածեք, թե դա որոշակի խմբին է արտացոլվում: Դա այդպես չէ: Դա ազգի ամբողջական պատկերն է: Եվ մենք տեսնում ենք այսօր համեմատական մի վիճակ, ինչպես Երեմիայի ժամանակներում էր, որ ամբողջ ազգն ինքն

փոքրիշատե մտել է կռապաշտության մեջ, ես կասեի մի տեսակ հեռացել է Աստծուց: Եվ դա անելով, դա ամբիոնի թուլությունն էր: Որովհետև եթե ամբիոնն ուղիղ և Աստծո Խոսքի հետ մնար, Աստված կլիներ ամեն եկեղեցում, ինչպես որ շարժվում է մեր մեջ այստեղ: Բայց նրանք հեռացրել են դրանից: Եվ հենց այդ մասին եմ ես...ես ուզում խոսել այս առավոտ: Եվ մենք տեսնում ենք, որ դա բացարձակ ճշմարտություն է բոլոր ժամանակաշրջաններում:

31 Կարծեմ Ամովսն էր, քանի որ քիչ առաջ նրան վկայակոչեցի, որ ասաց, որ ինքը «ոչ մարգարե է և ոչ էլ մարգարեի որդի»: Բայց ասում է, որ. «Երբ առյուծը մոնչաց, ո՞վ չի վախենում»:

32 Եվ եթե որևէ մեկը երբևիցե լսել է առյուծի իսկական մոնչոցը անապատում, սրանք, որոնք դուք լսում եք այստեղ վանդակներում, ուղղակի մլավում են: Բայց երբ ինչ–որ մեկը մոնչում է անապատում, բոլորը քարանում են: Ես պառկել եմ ջունգլիներում, որսել եմ նրանց: Եվ նա կենդանիների արքան...և երբ այդ առյուծը մոնչում է, նույնիսկ բզեզները դադարում են իրենց բզզոցը, բոլորը քարանում են: Ծնագայլերի և...և բորենիների ձայնը, և այլ կենդանիների, ինչպես նաև շնակապիկների, կապիկների ճիչը, բզեզների աղաղակը, դուք հազիվ եք լսում ձեր մտքերը, բայց թող հեռվում մոնչա առյուծը և յուրաքանչյուր բզեզը կլռի: Տեսեք նրանից վախենում են բոլորը: Մինչդեռ կան շատ բաներ, որոնք կարող են սպանել նրան, բայց նա կենդանիների մեջ համարվում է թագավոր:

33 Նա ասում է. «Առյուծը մոնչաց, ո՞վ չի վախենում. Աստված խոսեց, ո՞վ է, որ չի մարգարեանա»:

34 Եվ ես կարծում եմ, որ այդ վիճակը նորից համապատասխանում է այսօրվա մարտահրավերին: Աստված խոսել է: Հասկանո՞ւմ եք: Եվ մենք տեսնում ենք ձեռագիրը պատի վրա, դրա համար շատ հեշտ է մարգարեանալ և տեսնել, որ մենք վերջին ժամանակներում ենք:

35 Եվ մենք տեսնում ենք, որ Աստված ամեն հարանվանական խմբից, սկսած կաթոլիկությունից բոլոր բողոքական եկեղեցիներով, բուդդայականներով և այլոց Հնդկաստանից և այլն, կանչում է իր ժողովրդին, հավաքում է նրանց միասին: Ես...ես շատ ուրախ եմ դրա համար, որ տեսնում եմ, որ այս օրը

մոտենում է: Մենք հիմա...Սա...սա մեծ օր է, մեծագույն առանձնաշնորհումներից մեկը:

36 Դա...եթե ես...եթե իմանայի աշխարհի գոյությունից առաջ, երբ մենք հոգի էինք, Աստծո մասնիկը, որ մենք կանք, որովհետև մենք եղել ենք Նրա հետ աշխարհի հիմնադրումից առաջ: Որովհետև Հավիտենական Կյանքի միայն մեկ ձև կա, և դա Աստված է: Եվ մենք նրա մասնիկն ենք: Մենք այնքան չէինք, որ իմանայինք և...և կարողանայինք մտածել և էություն ունենայինք, բայց մենք եղել ենք Նրա մտքերի մեջ այն, ինչ լինելու ենք, աշխարհի հիմնադրումից առաջ: Որովհետև մենք Նրա մասնիկն ենք, ինչպես որ իմ որդին է իմ մասնիկը, ես էլ՝ իմ հոր և այլն: Մենք Աստծո որդիներն ու դուստրներն ենք Նրա կանխագիտությամբ:

37 Եվ այնտեղ եթե ես իմանայի, ինչպես որ գիտեմ հիմա, և կարողանայի նայել ժամանակի ողջ հատվածով և Նա ինձ ասեր. «Ո՞ր ժամանակում կուզեիր ապրել»: Ես կասեի այս ժամանակը՝ հենց համաշխարհային պատմության ավարտի նախօրեին և Աստծո մոտեցող Թագավորությանը, որ հաստատվելու է երկրի վրա: Ես կարծում եմ, որ բոլոր ժամանակաշրջանների ամենափառավոր ժամանակը հիմա է:

38 Մենք այստեղ տեսնում ենք, որ մարգարեն մեղադրում է Իսրայելին, երբ Աստված կարգեց և ուղարկեց նրան, նրանք մեղադրվում էին երկու մեծ մեղքերի մեջ: Եվ մենք ուզում ենք խոսել նրանց գործած այդ երկու բաների մասին: Եվ դրանից ուզում ենք բարգավաճել դրանով: Հիմա, նրանք երես էին թեքել Աստծուց՝ կենդանի ջրի Աղբյուրից, և իրենց համար ջրամբարներ էին փորել: Նրանք շրջվել էին այն բանից, ինչ Աստված տվել էր նրանց, և իրենց համար մի բան էին փորել, որը նրանք իրենք էին արել: Եվ այս ջրամբարները, նկատեք, նա...դրանք կոտրված էին և հոսում էին:

39 Հիմա, կոտրված ջրամբարը ջուրը չի կարող պահել: Այն հոսելու է: Ես մեծացել եմ ագարակում, և գիտեմ, թե ինչ է հին ջրամբարը և դժվարությունները, որոնք ունենք դրա հետ կապված:

40 Եվ այս հոսող ջրամբարը կարծում եմ այսօրվա հիանալի խորհրդապատկերն է, որ երբ (մեր) բոլոր ջանքերը գործադրել ենք մարդկանց, ժողովուրդին, եկեղեցիներին համախմբելու համար, դա միշտ եղել է ինտելեկտուալ ջանքերի ոլորտում: Մենք

փորձել ենք բոլոր մեթոդականներին դարձնել մկրտականներ, և ընդհակառակը, ինչպես նաև տաբեր հարանվանություններին: Իսկ դա հենց սկիզբից էլ Աստծո ծրագիրը չի եղել:

41 Աստված միայն մեկ հանդիպման վայր ունի: Ելից գրքում Նա ասում է, որ. «Ես տեղ ընտրել եմ Իմ Անվան բնակության համար, և դա միակ տեղն է, որտեղ Ես կհանդիպեմ մարդկանց»: Նա տեղ ընտրեց Իր Անվան բնակության համար: Եվ այնտեղ, ուր Նա բնակեցրեց Իր Անունը, այնտեղ էլ հանդիպեց Իսրայելին: Նա տեղ ունի, որտեղ հանդիպում է այսօր Իր եկեղեցուն, և Նա ընտրել է այդ Անունը, և այդ Անունը Հիսուս Քրիստոսն է: Այնտեղ է Նա հանդիպում իսկական հավատացյալին, երբ նա Հիսուս Քրիստոսի մեջ է: Ահա թե որտեղ Աստված ընտրեց բնակեցնել Իր Անունը:

Դուք կասեք. «Աստծո՞ Անունը»:

42 Նա ասաց. «Ես եկա Իմ Հոր Անունով»: Այսպիսով ահա թե որտեղ Աստված բնակեցրեց Իր Անունը, Քրիստոսի մեջ: Եվ Քրիստոսի մեջ է, ուր մենք բոլորս կարող ենք հանդիպել թափված Արյան ներքո և իրական, ճշմարիտ հաղորդակցություն ունենալ այնտեղ:

43 Աստված ամենասկզբում՝ Եդեմի պարտեզում, կազմեց Իր ձրագիրը, թե որտեղ է այն տեղը, ուր Նա կհանդիպի մարդուն, և դա ինտելեկտուալ հասկացողության վրա չէր հիմնված, եթե այդպես լիներ, ուրեմն Եվան ճշգրտորեն համապատասխանում էր Իր ձրագրին: Բայց մենք գիտենք որ նա ընդունեց սատանայի ինտելեկտուալ հասկացողությունը. «Աստված անշուշտ այդ չի անի», բայց Աստված ասել էր, որ կանի: Եվ այսպես այնուհետև Նա փրկագնման տեղ ընտրեց, և դա Արյան, և ոչ թե ինտելեկտուալ հասկացողության միջոցով էր:

44 Այսպիսով մենք պարզապես օդ ենք ծեծում, բայց դա մարդու բնույթն է, որ...որ մարդիկ փորձում են դա անել: Եթե մենք ժամանակ ունենայինք, կարող էինք բազում մասերի բաժանել, բայց ես այդ կոճակը չեմ ուզում: Մենք կփորձեք հնարավորինս պարզ դարձնել այն՝ «հոսող ջրամբարներ»: Եվ մենք տեսնում ենք, որ դա...դա նորից կատարվեց, սա մեր ժամանակաշրջանի տիպիկ պատկերն է, որում մենք ապրում ենք, մեր բոլոր ջանքերով:

45 Չարհամարենք Հիսուս Քրիստոսի Անունը

հիշատակող Աստծո ծառայի յուրաքանչյուր ջանքը: Նրան պետք է պատվել անգամ Նրա Անունը հարգանքով և պատվով հիշատակելու համար: Եվ մեծ ավետարանչական համակարգերը, որոնք այս վերջին օրերում հատել են աշխարհը և այլն, ես կարծում եմ, որ մենք երբեք չենք կարողանա մարդկանց միավորել մեկ սրտի մեջ, մինչև չհավաքենք նրանց Հիսուս Քրիստոսի Արյան ներքո: Դա միակ վայրն է, որտեղ մենք երբևէ ապահով կլինենք:

46 Վերջերս Արևելքից մեկն ինձ զանգեց և ասաց. «Եղբա՛յր Բրանհամ, լսել եմ տեղափոխվել եք Արիզոնա և այնտեղ մի վայր եք ստեղծել, որտեղ ապահով է»: Եվ ինչպես գիտեք, թե Պատգամն ինչպես եկավ և Տերն ինձ ասաց, թե ինչ է կատարվելու Այյասկայում և թե ինչպես է դա լինելու Կալիֆորնիայի երկայնքով, և դա այդպես էլ եղավ: Նրանք ասացին. «Եթե հիմա դա ցնցվի և այլն, որտե՞ղ է ապահով գոտին»:

47 Ես ասացի. «Միայն մեկ ապահով գոտի կա, որի մասին ես գիտեմ: Դա Քրիստոսի մեջ է: Որովհետև նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են...»: Դա միակ գոտին է, որ ես գիտեմ:

48 Հիմա, Երեմիան նաև կոչվել է «լացող մարգարե է»: Եվ որովհետև ես կարծում են, որ դա ստիպում էր մարգարեին լացել-լացել, ավելի ճիշտ, էր, որովհետև լինելով մարգարե (իսկ Աստծո Խոսքն այդպիսիների մոտ է գալիս), և տեսնելով որ մարդիկ գնում են իրենց ավադույթների ետևից և կարծում են, որ ամեն ինչ կարգին է, և ոչ մի ձև չկա նրանց ետ բերելու համար:

49 Որովհետև նրանք գնում էին ուղիղ դեպի աքսոր, որովհետև մենք գիտենք, որ ինչ որ ցանես, այն էլ կհնձես, անկախ նրանից՝ ով և ինչ ես դու: Եվ մենք որպես ազգ հնձել, ավելի ճիշտ, ցանել ենք, և պետք է հնձենք: Վաղը կեսօրին եթե Տերը կամենա կխոսեմ *Երկունքի ցավերի* մասին, և...և այնտեղ կշոշափեմ դա, այն, որ մենք չենք կարող մնալ անպատիժ: Մենք պետք է հնձենք այն, ինչ ցանում ենք:

50 Եվ եթե Աստված թույլ տա մեզ հաղթահարել այսօրվա քրիստոնեության խեղաթյուրումը և մարդկանց խեղաթյուրումն այնպիսի բաներում, որոնք այսպես կոչված քրիստոնեություն է, ապա ինչպես մի անգամ եղբայն Մուրն ասաց. «Բարոյապես Նա ստիպված կլիներ վեր հանել Սոդոմին ու Գոմորին և նրանցից ներողություն խնդրել այրելու համար»: Դա ճիշտ է, որովհետև Աստված

մնում է արդար: Եվ ուր է հասել անարդարությունը, դա... դա Նրա սրբությունն ու Իր Խոսքն է դառնում, որ Նա մարդկանց հնձել է տալիս այն, ինչ իրենք ցանում են, և մենք էլ կհնձենք դա:

51 Հիմա, ուշադրություն դարձրեք. նրանք Նրան՝ կենդանի ջրերի Աղբյուրին, լքեցին և իրենց համար ջրամբարներ փորեցին:

52 Հիմա, այստեղ կարող է լինել մեկը, ով չի հասկացել, թե ինչ է ջրամբարը: Ջրամբարը մարդու ձեռքով պատրաստված մի պահեստ է, որը փորձում է ջրհորի տեղը զբաղեցնել: Դա մի բան է, որն ինչ-որ մեկն է փորել: Իսկ քանի՞սը գիտեն, թե ինչ է ջրամբարը: Հրաշալի է: Լավ, գյուղացի մարդիկ շատ կան այստեղ այս առավոտ: Դրա համար նրանք...Ես հիշում եմ այն հին ջրամբարը, թե ինչ տեսք ուներ այն, և ես միշտ վախենում էի խմել դրանից: Դա մարդու ձեռքով պատրաստված ջրամբար էր: Եվ այն երբեք չի կարող հուսալի լինել: Դուք չեք կարող հույսը դնել ջրամբարի վրա:

53 Ցանկացած բան, որ մարդն անում է, միշտ չէ, որ շատ լավ է: Բայց ինչպես որ Տերը սահմանել է ժամանակն իր շրջանում, և երկրագունդը պտտվում է. ամեն տարի, ամեն ժամանակ, ամեն օր, ամեն ժամ այն հատվում է, և արեգակը մայր է մտնում և երբեք չի դադարում: Բայց լավագույն ժամացույցները, որոնք կարող ենք ձեռք բերել, մեկ ամսվա ընթացքում շատ րոպեներով կշեղվեն: Բայց տեսնում եք, այն ամենն, ինչ Աստված է անում, կատարյալ է, իսկ այն, ինչ մարդն է անում անկատար է: Ուրեմն ինչո՞ւ մարդու արածն ընդունել, երբ կարող եք կատարյալն ունենալ:

54 Ես միշտ ասել էլ դա մեր՝ հոգեգալստականներիս մասին: Տեսեք, մենք գիտենք, և մենք Աստծո ուղղությունից դուրս չենք...չենք, չենք կարծում, բայց նաև գիտենք, որ մեր մեջ կան մարդիկ, ովքեր փորձում են նմանակել ուրիշին: Դա ուղղակի մարդկային է: Նրանք փորձելու են դա անել: Նրանք արեցին դա Աստվածաշնչում. «Մեկը. «Ես պողոսական եմ», «Ես սիլասական եմ» և այլն: Բայց նրանք...նրանք փորձում են նմանակել այն, ինչ մեկ ուրիշն է արել կամ անում:

55 Բայց ինչո՞ւ պիտի ընդունեք կեղծ նմանակումը, երբ երկինքը լի է իսկական բաներով, երբ «այս խոստումը ձեզ ու ձեր զավակների համար է»: Ինչո՞ւ պիտի ընդունենք մի բան, որ այլ էր: Ինչո՞ւ պիտի ընդունենք հավատամք կամ

դոգմա, երբ Աստվածաշունչն Աստծո անխարդախ Խոսքն է: Ինչո՞ւ պիտի փորձենք ավելացնել կամ պակասեցնել, երբ Տեր Հիսուսն ասում է Հայտնության 22:18–ում. «Ով որ մեկ բառ ավելացնի Խոսքին, կամ մեկ Բառ պակասեցնի, նրա բաժինը կհանվի Կենաց Գրքից»:

56 Երբ Աստված մարդկային ցեղը դրեց...երկրի վրա, նրանց պատվիրեց, որ ապրեն Իր Խոսքով: Աստծո Խոսքը շղթայի նման է, դուք դրանով անցնում եք դժոխքի վրայով, և շղթայի ամրությունը որոշվում է ամենաթույլ օղակով, և Աստված ուզում է, որ մենք Դրա ամեն մի Խոսքը պահենք: Դա Աստվածաշնչի սկիզբում էր. մեկ Խոսքի խախտումը մարդկային ցեղը ընկղմեց մահվան մթության մեջ:

57 Հիսուսը եկավ Աստվածաշնչի մեջտեղում և ասաց, որ. «Մարդ ոչ միայն հացով կապրի, այլ ամեն Խոսքով»: Ոչ թե Խոսքի մի մասով կամ հարյուրից ինսունինը տոկոսով, այլ ամեն Խոսքով, ճիշտ այնպես, ինչպես եղել է Ադամի և Եվայի հետ:

58 Իսկ Աստվածաշնչի վերջում՝ Հայտնության 22:18–ում, Նա ասում է, որ. «Ով որ այս Խոսքից մի Բառ պակասեցնի կամ մի բառ ավելացնի»:

59 Ուրեմն ինչո՞ւ պիտի ներարկենք Այստեղ ինչ–որ մեկի գաղափարները, երբ սա Աստծո սեփական Գաղափարն է դրա վերաբերյալ: Մենք ուզում ենք ընդունել այն, ինչ Նա ասաց: Գրված է նաև. «Թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ»:

60 Ահա թե ինչում էր բանն այդ մարգարեի հետ: Երեմիայի օրերում, նա մարգարե էր, ուներ Տիրոջ Խոսքը: Իսկ այս մարդը փորձում էր ինչ–որ բան ներարկել դրա մեջ: Հիմա, սա հուսալի չէ: Ես այս ջրամբարները նմանեցնում եմ այս համակարգերին, որոնք մենք փորձել ենք վերցնել որ Աստծո սկզբնական Խոսքի տեղը գրավեն:

61 Որովհետև ոչինչ չի կարող Դրա տեղը գրավել: Սա Աստված է: «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր: Եվ Բանը մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց»: Եբրայեցիների 13:8–ն ասում է. «Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»: Ինչպե՞ս մենք կարող ենք դրանից հեռու մնալ: Այն պետք է Ճշմարտություն լինի: Նա մնում է նույնը: Նա նույնն է ամեն սկզբունքով:

62 Այդ է պատճառը, որ դուք՝ մկրտականներ և մեթոդականներ, վայելում եք Դա, և կաթոլիկներ, երիցականներ և այլն, վայելում եք այդ Ներկայությունը: Ինչ-որ տեղ՝ ձեր ներսում, դուք ընդունել եք Աստծուն: Գուցե երբեմն ինտելեկտուալ ձևով, գուցե զգացել եք Աստծո Զորությունը և դուք Աստծո ծառան եք, բայց երբ իսկապես կարողանաք մտնել Աստծո մեջ և ճանաչեք ձեր տեղը Նրանում որպես Աստծո որդի կամ դուստր, ահա թե ինչն է այդ մեծ հուզմունքը, որն Աստված նախատեսել է, որ դուք ունենաք:

63 Մենք հիմա նկատում ենք Մարկոսի Ավետարանում, 16-րդ գլուխ, որ Հիսուսը չասաց. «Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և...և...և սովորեցրեք»: Նա ասաց. «Գնացեք Ավետարանը քարոզեք»: Ավետարանը քարոզել նշանակում է ցուցաբերել Սուրբ Հոգու Զորությունը: «Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և ցուցաբերեք Սուրբ Հոգու Զորությունը»:

64 Ես զրուցում էի մի եղբոր՝ հովանավորներից մեկի հետ.... իմ ժողովները Հնդկաստանում, այնտեղ՝ Բոմբեյում, Հարավային Աֆրիկայում և տարբեր վայրերում, որտեղ միսիոներները սովորեցրել են դա որպես խոսք կամ որպես ինտելեկտուալ հասկացողություն: Բայց մի օր ժողովի ժամանակ, երբ Սուրբ Հոգին Ինքն իջավ և խորանի մոտ մեկ հրավերով փրկեց երեսուն հազար բնիկների, և հենց այն նույն հողի վրա, որտեղ կանգնած էին նրանք: Կանայք, ովքեր կանգնած էին այնտեղ գրեթե այնպես մերկ ինչպես որ լույս աշխարհ էին եկել, և հենց այն պահին, երբ նրանք իրենց ձեռքերը բարձրացրեցին, որ ընդունեն Քրիստոսին...

65 Եվ Սուրբ Հոգին իջավ այդ վայրում և բժշկեց քսանհինգ հազար մարդու միանգամից՝ անվասայլակներից, մահիճներից և պատգարակներից: Հաջորդ օրը քաղաքապետը կանչեց, որ նայեմ պատուհանից այդ լցված բեռնատարներին, որոնք անցնում էին փողոցով:

66 Այդ կանայք, որ կանգնած էին այնտեղ մերկ, և չգիտեին, որ նրանք մերկ են: Բայց հենց որ Սուրբ Հոգին դիպավ նրանց, ծալեցին իրենց ձեռքերը և հեռացան իրենց տղամարդկանց ներկայությունից:

67 Ես զարմանում եմ, թե ինչպես մենք Ամերիկայում մեզ քրիստոնյա ազգ ենք կոչում, և Աստծո ներկայության մեջ,

և տարեցտարի մենք, մեր կանայք, ավելի են հանվում: Երբ պետք է ավելի շատ հագուստ հագնեք: Եվ ինչքան շատ եք հագնում Քրիստոսին, այնքան ավելի շատ եք ձեր վիճակը գիտակցում: Երբեմն տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ փողոցում վարվում, ինքս ինձ հարց եմ տալիս, թե արդյոք մտավոր առումով ամեն ինչ կարգին է: Կարծես թե նրանք չեն գիտակցում, որ երբ անում են դա, այն, ինչ անում են, նրանք իրենց խայծ են դարձնում սատանայն՝ հոգիներ դժոխք ուղարկելու համար: Դա ճիշտ է: Բայց աշխարհը գտնվում է ապականության մեջ, ինչպես որ Երեմիայի օրերում էր:

68 Այժմ վերադառնանք ջրամբարներին: Հիմա, ջրամբարը հուսալի չէ, որովհետև չի կարող ինքն իրեն լցվել: Եվ այն լցվելու համար կախված է տեղական անձրևներից, տեղական անձրևներից կամ տեղական արթնություններից, մի փոքրիկ արթնություն *այստեղ,* մի փոքրիկ արթնություն *այնտեղ* կամ և այլն, որ լցնի: Ուստի այն հուսալի չէ: Այն չի կարող ինքն իրեն լցնել, ինքնին չի կարող համալրվել: Նա չի կարող դա անել: Այն լցվելու համար կախված է անձրևներից:

69 Այնուհետև եկեք ուշադրություն դարձնենք այն բանին, թե որտեղ է նա...նա ստանում իր անձրևը, որտեղ է նա ստանում իր ջուրը՝ ջրամբարը: Այն հոսում է ախորների, հորդանոցի տանիքներից, որտեղ ամբողջ փոշին ու կեղտը են նստած, լվացվում է անձրևով և թափվում է ուղիղ մարդու ձեռքով պատրաստված ջրհորդանով ջրամբարի մեջ և դառնում է համարյա աղբահոր: Այն լվանում է գոմի տանիքը, որտեղ բոլոր կենդանիներն են, ախորի հոտից, և այլն, և թափվում է ցած: Օդով փոշին և այլն նստում է ախորին, հետո տեղական անձրևը գալիս լվանում և թափում է ցած:

70 Այնուհետև այդ ջուրը մարդու ձեռքով պատրաստված խողովակով հոսում է մարդու ձեռքով պատրաստված ջրհորդանով մարդու ձեռքով պատրաստված ջրամբարի մեջ: Իսկ հետո երբ այն հասնում է այնտեղ, կեղտոտ է, այնքան կեղտոտ է, որ պետք է լաթ դնես վրան, այլապես չես կարողնա խմել այն: Հիմա, տեսնում եք, այն լվանալով հոսում է տանիքից մարդու ձեռքով պատրաստված խողովակով մարդու ձեռքով պատրաստված ջրհորդանով մարդու ձեռքով պատրաստված ջրամբարի մեջ: Իսկ հետո մարդու ձեռքով պատրաստված լաթը վրան՝ միջատներին և այլ բաներին հեռու պահելու համար:

71 Հիմա, մենք նկատում ենք, որ ջուրն այնտեղ մի քանի օր մնալուց հետո՝ այս մարդու ձեռքով պատրաստված հարանվան-...այսինքն, ջրամբարի մեջ: Ներողություն: Ներեցեք: Լավ: Այն բանից...այն բանից հետո, երբ այն լվացվում է բոլոր տեսակի աստվածաբանություններից և այլ բաներով լվացած իր մեջ. մենք տեսնում ենք, որ ջուրն այնտեղ մի քանի օր մնալուց հետո լճանում է:

72 Բոլորն էլ գիտեն եկեղեցու պատմության մեջ, որ երբ Աստված ինչ-որ բան է ուղարկում, պատգամ, և այն Աստծուց թարմացում է դառնում, հետո այդ հիմնադրի կյանքից (կամ ով էլ որ լինի, անվանեք նրան ռեֆորմատոր կամ ինչ ուզում եք), նրա մահից հետո նրանք համակարգ են մշակում և կազմակերպություն են ստեղծում: Եվ հենց որ նրանք կազմակերպություն են ստեղծում դրանից, այն հենց այնտեղ էլ մահանում է և էլ երբեք չի կենդանանում: Միշտ այդպես է արվել ամեն ժամանակաշրջանում, կրկին ու կրկին:

73 Ի հարգանքս այս կաթոլիկ քահանայի, որ նստած է այստեղ. երբ Աստված եկեղեցին կազմակերպեց... այսինքն, ոչ թե կազմակերպեց, Աստված երբեք եկեղեցի չի կազմակերպել: Նա նման գործով չի զբաղվում: Նա ծնունդով և ոչ թե կազմակերպությամբ է զբաղվում: Այսպիսով, երբ Աստված Պենտեկոստեի օրը սկիզբ դրեց եկեղեցին: Այնուհետև ի վերջո Նիկեայում, Հռոմում, նրանք կազմակերպեցին դա, և ահա թե որտեղ նա իր Զորությունը կորցրեց:

74 Հետո մենք եկանք լյութերական ռեֆորմացիային, և դա հզոր բան էր: Տրված էր Աստծո Խոսքը. «Արդարը հավատքով պիտի ապրի»: Եվ երբ նրանք արեցին, բոլորը միասին կայտառանալու և երթով առաջ շարժվելու փոխարեն, լյութերական եկեղեցի ստեղծեցին՝ առանձնացնելով իրենց այս խմբից, և այդ ժամանակ դա մահացավ:

75 Հետո Աստված հանեց Զոն Վեսլեյին սրբացման, շնորհքի երկրորդ գործի պատգամով, և դա հրաշալի էր: Բայց Վեսլեյից և Ասբուրիից հետո, նրանք կազմակերպեցին դա և այն մահացավ:

76 Հետո հայտնվեցին հոգեգալստականները պարգևների վերականգնումով: Նրանք լավ էին ընթանում, ի՞նչ կատարվեց: Կազմակերպեցին այն և դա մահացավ: Միանգամայն ճիշտ է:

77 Հիմա այս ամենի մեջ Աստված դեռ կանչում է մնացորդը այդ սերունդների յուրաքանչյուրից: Նա անշուշտ կանչում է: Եվ սա մեր դուրս գալու և միանալու ժամանակն է: Եվ ես կարծում եմ, ահա թե ինչում են Ամբողջական Ավետարանի Գործարարները մեծ դեր խաղացել այս պատերը քանդելու գործում և ասելու, որ. «Մեր մեջ տարբերություն չկա: Եկեք հավաքվենք և երկրպագենք Աստծուն մեկ սկզբունքի և ոչ թե կազմակերպության ներքո»: Եթե դա կազմակերպություն լիներ, ես հենց հիմա էլ կհեռանայի այս հարթակից: Ես դրա հետ ոչ մի կապ չունեմ:

78 Ինչ է սա. սա պետք է հաղորդակցություն լինի, և ոչ թե ինչ-որ հավատամքի հաղորդակցություն, այլ հաղորդակցություն Քրիստոսի մեջ Իր հարության զորությամբ: Դա այն է, որ Կյանք, ծնունդ է բերում:

79 Եվ ծննդից առաջ, մենք հասկանում ենք, որ ծննդից առաջ պետք է մահ լինի: Եվ ծնունդը խառնաշփոթ է, ինձ համար մեկ է, թե ինչ ծնունդ է դա: Լինի դա խոզանոցում, կամ...կամ որտեղ էլ որ լինի, այն խառնաշփոթ է: Այդպես էլ վերստին ծնունդն է, այն ձեզ մղում է անելու բաներ, որոնք սովորաբար չէիք էլ մտածում, որ կանեք: Բայց երբ դուք պատրաստ եք ինքներդ ձեզ համար մեռնելու, այդ ժամանակ վերստին եք ծնվում, նոր արարած եք Քրիստոս Հիսուսի մեջ, այդ ժամանակ բաները բացվում են և կյանքը նոր նշանակություն է ստանում ձեզ համար, որովհետև ընդունել եք Հիսուս Քրիստոսի Անձը և ոչ թե ինչ-որ տեսություն կամ հավատամք:

80 Կամ նույնիսկ գրավոր Խոսքը, այն պետք է կենդանանա Սուրբ Հոգով: Կապ չունի, թե ինչքան աստվածաբանություն ունեք, այն մեռած պառկած է այնտեղ: Ես կարող է մի բուռ ցորեն ունենամ, մինչև որ այն չմտնի կենդանացման պրոցեսի մեջ, ցորենը չի կենդանանա: Դուք էլ կարող եք փիլիսոփայության, իրավագիտության, ինչ ուզում եք, դոկտորի կոչում ունենալ, բայց քանի դեռ Սուրբ Հոգին չի իջել դրա վրա և կենդանացրել այն ձեզ համար որպես անձնական փորձառություն Աստծո հետ, ցորենից ոչ մի օգուտ չի լինի: Ձեր ուսումը իզուր է:

81 Ինչպես այս անգլիացին ասաց անցած երեկո այստեղ, ես ապշած էի դրա վրա: Իր ունեցած ողջ կրթությունը Պողոսի պես, իր ողջ իմացածը նա պետք է մոռանար,

որպեսզի Քրիստոսին գտներ, աներ բաներ, որոնք չէր էլ մտածում, որ կանի:

82 Բայց Աստված այդպես է գործում, Նա նվաստացնում է մեզ մեր կրթական համակարգում: Ես ոչ թե փորձում եմ տգիտությանը սատարել, այլ ուզում եմ ձեզ ասել տարբերությունը: Կրթությունը երբեք չի կարող Կյանք բերել: Կյանք բերելու համար Աստծո Հոգին է հարկավոր, և այդ Կյանքը չպետք է ինտելեկտուալ արթնությունից դուրս գա: Այն պետք է Աստվածաշնչից, Խոսքի արթնությունից դուրս գա, իսկ այդ Խոսքը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Եվ երբ այն այսօր իջնում և կենդանացնում է, դուք ստանում եք նույն արդյունքները, ինչ դիտում եք Գործքի 2-ում: Ճիշտ է: Միշտ այդպես է եղել և միշտ էլ այդպես կլինի, որովհետև Աստծո Հոգին է հանդիսանում մթնոլորտի պատճառը:

83 Մթնոլորտ է հարկավոր գործեր անելու համար: Դրա համար են ձեզ՝ տղամարդիկ, միշտ սովորեցնում. «Բերեք ձեր երեխաներին այստեղ»: Դե, անշուշտ դա ճիշտ է: Ես ուրախ էի տեսնելով, որ աղջիկս՝ Ռեբեկան, ընդամենը մի քանի րոպե առաջ ներս մտավ ու նստեց: Ձեզանից ոմանք տեսան, որ ես աչքով արեցի մի կնոջ, դա իմ աղջիկն էր, նա ներս մտավ ու նստեց: Ես ուզում եմ, որ նա ստանա Հոգով մկրտությունը, դրա համար է նա այստեղ՝ հավաքույթում: Դրա նպատակը դա է: Մթնոլորտ է հարկավոր:

84 Ինչպես ծեր դոկտոր Բոսվորդ եղբայրն էր ասում. «Դուք կարող եք վերցնել հավի ձուն և դնել շան տակ, ձվից ճուտիկ դուրս կգա»: Ինչո՞ւ: Որովհետև ձու է և ճիշտ մթնոլորտում է հայտնվել:

85 Ինձ համար մեկ է՝ մեթոդական եք, մկրտական եք, երիցական, ճիշտ մթնոլորտում այն Աստծո վերստին զավակ դուրս կհանի: Մթնոլորտն է դա անում, կապ չունի, թե ինչ հարանվանական պիտակ ունեք դուք:

86 Մի ժամանակ ես անասուններ էի արածեցնում: Ես նկատում էի, որ նախրապանը, երբ անասուններին քշում տանում էինք անտառ, ագարակից դուրս գտնվող արոտավայրերից, և տանում էինք անտառ: Նա կանգնում էր այնտեղ և հետևում էր, երբ նրանք անցնում էին դարպասների միջով՝ ցանկապատի մոտով: Նա այդքան էլ ուշադրություն չէր դարձնում ցեղատեսակներին, որովհետև ամեն տեսակ էլ անցնում էր այնտեղով: Բայց մի բան կար, որին նա ուշադրություն էր դսարձնում՝ արյան պիտակը: Այն պետք է զտարյուն Հերֆորդ լիներ,

այլապես չէր կարող գնալ այդ անտառ, որովհետև Հերֆորդի Միությունն է արածեցնում այդ անտառում: Այն պետք է արյան պիտակ ունենար՝ բուծումը ճիշտ պահպանելու համար:

87 Եվ ես կարծում եմ, որ Դատաստանի օրում էլ այդպես կլինի: Նա ինձ չի հարցնի, թե արդյոք ես եղել եմ մեթոդական, մկրտական, հոգեգալստական կամ երիցական, այլ Նա փնրտելու է այդ Արյան պիտակը: «Երբ Արյունը տեսնեմ, ձեր վրայից պիտի անցնեմ»: Ահա թե ինչն է կարևոր:

88 Այսպիսով մենք տեսնում ենք, որ այս ջրամբարները մի քիչ մնալուց հետո նրանք...նրանք լճանում են և անպետք են: Այն հետո նաև դառնում է գորտերի, մողեսների, օձերի, փայտոջիլների, մանրէների և այլ նման բաների բնակարանը, որովհետև լճացած վիճակն է բերում դրան: Կարո՞ղ եք պատկերացնել գոմի տանիքի կամ գոմի մոտ գտնվող տան տանիքի լվացումը, կամ ցանկացած տեղ, որտեղ կեղտ լինի, ինչ փայտոջիլներ, մանրէներ և այլ նման բաներ են լվացվում և թափվում այս ջրամբարի մեջ:

89 Հիմա, սա մարդու ձեռքով ստեղծված ցանկացած համակարգի կատարյալ օրինակն է: Նա հենց սկզբից էլ ծախողվել է: Դրա համար նա Փրկչի կարիքն ունի: Նա ինքն իրեն չի կարող փրկել, ոչինչ չի կարող անել դրա հետ կապված: Նա հենց սկզբից էլ կորսված է: Նա ծնվել է աշխարհում մեղավոր, և գալիս է աշխարհ սուտ խոսելով: Նա սուտասան է, սկսենք դրանից, ուստի ինչպե՞ս նա կարող է ինչ-որ բան անել իր համար: Սուրբն ինչպե՞ս կարող է:

90 Սուրբ մարդ չկա: Սուրբ եկեղեցի չկա: Դա Սուրբ Հոգին է: Ոչ թե սուրբ եկեղեցի, սուրբ մարդիկ, դա Սուրբ Հոգին է մարդկանց մեջ, ահա թե ինչ է այն: Ամեն: Ոչ թե սարն էր սուրբ, որտեղ Պետրոսն ու մնացածներն էին կանգնած, սարը սուրբ չէր: Այլ Սուրբ Աստվածն էր սարի վրա, որ սուրբ էր դարձնում այն: Ոչ թե սուրբ անձնավորություն, այլ մարդու մեջ գործող Սուրբ Հոգին է սուրբ դարձնում նրան է: Ոչ թե մարդը, այլ Սուրբ Հոգի Անձը: Դա մարդը չէ, որովհետև նա պարզապես մարդ է «մեղքերի մեջ ծնված, անօրենությունների մեջ ծևավորված, եկել է աշխարհ սուտ խոսելով»:

91 Մարդու ձեռքով ստեղծված ցանկացած համակարգը կպահի նրան դրա մեջ: Նա կկուրացնի մտավորականի, ինտելեկտուալի աչքերից, որ մտածում են. «Ես եկեղեցուն

եմ պատկանում, իմ անունը գրանցված է գրքում: Ես *այս* բանն եմ արել: Իմ հայրը *այսինչն է* եղել և այլն»: Դա լավ է հնչում, ոչինչ չենք ասում դրանց դեմ: Բայց մինչդեռ, բարեկա՛մ, Հիսուսն ասաց. «Եթե մեկը վերստին չծնվի, նույնիսկ չի կարող տեսնել», այնտեղ *«տեսնել»* չի նշանակում, որ իր աչքերով է տեսնում, այլ *«հասկանալ* Երկնքի թագավորությունը»: Մինչև որ չծնվեք դրանում:

92 Ինչպե՞ս կծնվեր այս մկրտական ավետարանիչը, այն մարդը, որ կագնած էր այնտեղ և քննադատում ու ծաղրում էր դա: Տեսնում եք, նրա մեջ չկա մի բան, որ կարողանա դա նույնիսկ ընդունել, սակայն Աստված պետք է դա աներ, հասկանում եք: Աստված տվեց նրան Սուրբ Հոգին: Նա ցույց տվեց, որ սա կեղծավորություն չէ, սա Խոսքն է: Նա լսում է դա միայն դպրոցական գաղափարից, և նրանք փորձում են Աստծո բոլոր օրենությունները վերցնել և դնել անցած օրվա մեջ:

93 Վերջերս այստեղ երիտասարդ մի քարոզիչ, այս առավոտ նա նստած է այստեղ, և նա մոտեցավ ինձ և ասաց. — Բրանհամ Եղբայր, մի բան կա, որ դուք սխալ եք անում:

Ես ասացի. — Օգնեք ինձ:

94 Եվ նա ասաց. — Ես կարծում եմ, որ դուք ազնիվ և լավ մարդ եք, բայց…

Ես ասացի. — Ծնորհակալ եմ, պարոն:

Նա ասաց. — Բայց մեկ բան կա, որ դուք սխալ եք անում:

Ես ասացի. — Հուսով եմ՝ Տերը միայն մեկ սխալ բան կգտնի:

95 Եվ նա ասաց. — Դե…Ահա թե ինչը, որ դուք անում եք, սխալ է,— ասաց,— դուք փորձում եք աշխարհին ներկայացնել առաքելական ծառայությունը, իսկ,— ասաց,— առաքելական ծառայությունն ավարտվեց առաքյալների հետ:

96 Ես ասացի. — Ինչպես մկրտական մկրտականին կուզենայի ձեզ մի հարց տալ:

Ասաց. — Ի՞նչ:

97 Ես ասացի. — Դուք հավատո՞ւմ եք, որ Աստծո Խոսքի ամեն մի մասնիկը ներշնչված է:

Նա ասաց. — Իհարկե:

98 Ես ասացի. — Ուրեմն Նա ասաց. «Որևէ բառ չավելացնել կամ չպակասեցնել, որովհետև,— հետո ես ասացի,— ես ձեզ ցույց կտամ, թե որտեղ է առաքելական Օրհնությունն Աստծո խոստումի համաձայն իջել մարդկանց վրա, հիմա դուք ինձ ցույց տվեք Աստծո խոստումը և, թե որտեղ է այն վերցվել մարդկանցից: Տեսնում եք, եթե դուք չեք կարող արտացոլել դա Խոսքի մեջ, ուրեմն...ուրեմն մոռացեք այդ մասին, հասկանում եք,— ասացի ես,— որովհետև դա դեռ շարունակվում է:

99 Մի քանի րոպե նա ոչինչ չասաց: Եվ այսպես ես ասացի. — Դե, այդ դեպքում, եղբայր, ես կուզեյի ձեզ հարցնել հետևյալը: Պենտեկոստեի օրը Պետրոսն առաքելական պատգամը ներկայացրեց: Եվ մենք բոլորս էլ գիտենք, որ դա ճշմարտություն է, որովհետև նա ուներ Թագավորության բանալիները, որոնք Հիսուսն էր տվել իրեն: Իսկ հիմա տեսեք, թե ինչ ասաց նա: Նա ասաց. «Ապաշխարե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կստանաք: Որովհետև այս խոստումը ձեզ ու ձեր զավակների համար է, նաև այն հեռավորների համար, ում մեր Տեր Աստված կկանչի»: Ուրեմն եթե տեղ կա, որ Նա վեր է առել այն, այդ դեպքում ի՞նչ եղավ Պենտեկոստեի օրը Պետրոսի խոսքերի հետ»: Հասկանո՞ւմ եք: Ո՛չ, այն երբեք չի դադարել:

Սիրելի մեռնող Գառնուկ, Քո թանկագին
Արյունը
Երբեք չի կորցնի իր Զորությունը,
Մինչև որ Աստծո փրկագնված Եկեղեցին
Չփրկվի, որ այլևս չմեղանչի:

Այնուհետև ազնվական, քաղցր երգով,
Ես կերգեմ Քո փրկագնող Զորության
մասին,
Երբ այս թոթովախոս լեզուն,
Լուռ պառկի գերեզմանում:

100 Ով Աստված, օգնիր ինձ, և բոլորիս հավատալ ու կառչել դրանից և կանգնել դրանով, որովհետև սա Ավետարանի Ճշմարտությունն է: Այո՛, պարոն:

101 Իմաստուն մարդը չպիտի նայի այս բաներին: Եվ գիտեմ որ դրանք երբեք չեն գործի: Նրանք երբեք էլ չեն գործել: Կազմակերպված կրոնը և փորձառությունը երբեք չեն գործի Աստծո ներկայության մեջ: Այն պետք է գա, անարատ, Աստծուց: Այն երբեք չի կիրառվել

Աստծո կողմից, ոչ մի անգամ անցյալում Աստված նման համակարգ չի օգտագործել: Դուք հիմա, ո՛հ, անդամներ եք հավաքում և նման բաներ: Բայց ես Աստծո իսկական Սերմը նկատի ունեմ, Օրհնությունը Պենտեկոստեի Օրը հեղվելու պես, այն կազմակերպության միջոցով չի գալիս, այլ ծնունդի՝ վերստին ծնունդի միջոցով է գալիս:

102 Մենք կանչված ենք վերցնելու Իսրայելը որպես... որպես օրինակ, ինչը որ էին: Ուշադրությո՛ւն դարձրեք. «Նրանք լքել էին Նրան՝ իրենց մատակարարող աղբյուրին, և իրենց համար ջրամբարներ էին փորել»: Կարո՞ղ եք պատկերացնել մի, մի, մի, մի բան, երբ մեկն արտեզյան ջրհորի մոտ է, խմում է, իսկ հետո ուզում է իր համար ջրամբար պատրաստել, հասկանո՞ւմ եք, որ խմի դրանից: Հենց դա է ասում մարգարեն, հենց դա է ասում Աստծո Խոսքը: Հենց դա է ասում Աստված մարգարեին: «Դուք թողել և...և լքել եք Ինձ՝ կենդանի ջրերի Աղբյուրիս, և ձեզ համար ջրամբարներ եք հորատել, որոնք կոտրված են և չեն կարող ջուրը պահել»:

103 Տեսնում եք, նրանք ուզում էին մի բան, որ իրենք կկարողանային հսկել կամ ցույց տալ, թե ինչ են նրանք արել: Դա...դա է կազմակերպված կրոնի անմտությունը: Այն միշտ փորձում է, նրանք իրենք պետք է ինչ–որ բան ունենան դրանում: Նրանք պետք է այս բոլոր համակարգերը և հասարակությունները և այլն ունենան. «Եվ ես հիմա *սրան* եմ պատկանում»: Աստծո խոնարհ զավակներ լինելու փոխարեն, նրանք ուզում են մի բան, որ իրենց կարողանան ցույց տալ: Փոխանակ թույլ տան, որ Աստված Իր ձևով անի դա, նրանք իրենց ձևով էին ուզում դա անել: Եվ դա է ճանապարհը, որ համակարգն այսօր գրավել է եկեղեցին: Ոչ... Յուրաքանչյուր համակարգ, մեկն *այս* ձևով է դա ուզում, մյուսը՝ *այն* ձևով: Եթե դուք մեթոդական եք, ուրեմն պետք է *այս* կերպ լինեք: Մկրտականն *այս* կերպ: Երիցական, կաթոլիկ և մնացածը, նրանք իրենց համակարգներն ունեն: Ոչ մի բան չունեմ դրա դեմ, բայց ես դրա մասին չեմ խոսում:

104 Մարդն իր ձևով է ուզում դա անել, իսկ Աստված Իր անելու ձևն ունի: Նա ասաց. «Դուք ձեր ճանապարհից եք կառչում, կոտրված ջրամբարից, և չեք ուզում ընդունել Իմ ճանապարհը՝ Կյանքի ճանապարհը»:

105 Եվ դա նույն բան է, ինչպես և այսօր: Ամենևին էլ չի փոխվել: Մտածեք, թե ինչ հիմարություն է մարդու կողմից

արտեզյան ջրհորի հորդացող մաքուր, վճիտ ջուրը թողնել, իսկ հետո ուզենալ գնալ կոտրված ջրամբարի մոտ, որն ինքն է պատրաստել, և իր համար ջրամբար փորել, գոմի տանիքի այդ աղբով լվացած դրանում, և հետո խմել դրանից: Ուրեմն այդ մարդու մտքի ինչ-որ մի բան կարգին չէ:

106 Եվ երբ մի մարդ Սուրբ Հոգին ընդունելու փոխարեն, որը հաստատում և իրական է դարձնում Սուրբ Գիրքը ձեզ համար, կառչում է Սուրբ Գրքի եկեղեցական հասկացողությունից, ուրեմն հոգևոր առումով ինչ-որ բան կարգին չէ այդ մարդու մոտ: Դա միանգամայն ճիշտ է: Անկասկած, Սուրբ Հոգին: Ամեն մեկն ունի Աստվածաշնչի իրենց մեկնությունը, ինչը կարծում եք, ճիշտ է: Աստված ձեր օգնության կարիքը չունի: Աստված ձեր մեկնության կարիքը չունի:

107 Աստված Ինքն Իր Մեկնաբանն է: Աստված տալիս է մեկնությունն այնպես, ինչպես որ ասում է, որ անելու է դա: Սկզբում Տերն ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ: Դա մեկնության կարիք չունի: Ահա թե ինչ արեց Աստված: Նա ասաց. «Կույսը կհղիանա», և նա հղիացավ: Մեկնության կարիք չկա: Նա ասաց, որ «Իր Հոգին թափելու է ամեն մարմի վրա» և այդպես էլ արեց: Ոչ մի մեկնություն պետք չէ: Աստված մեկնում է Իր սեփական Խոսքը՝ հաստատելով, դրսևորելով և ապացուցելով այն:

108 Ահա թե ինչպես էր ապացուցվում, որ մարգարեն Աստծուց է: Նա ասել էր. «Եթե ձեր մեջ լինի մեկը, ով հոգևոր կամ մարգարե է, Ես՝ Տերս, տեսիլքով Ինձ կճանաչեցնեմ նրան և երազով կխոսեմ նրա հետ: Եվ եթե նրա ասածը կատարվում է, վախեցեք նրանից, բայց եթե չի կատարվում, մի վախեցեք»:

109 Դա նույն բանն է, երբ Աստված ասում է Իր Խոսքը, իսկ մարդն ասում է. «Խոսքը *Սա է*», և դա այդպես է լինում, ուրեմն Աստված է անում դա:

110 Բայց եթե նա ասում է. «Սա *այսպես է,* և այդ օրերն անցել են», դա վերցնում է ողջ...Հացն իր ձեռքին նա մեկնում սովածներին՝ երեխաներին, և նրանցից վերցնում է, և նրանք սովամահ են լինում: Ինչո՞ւ պիտի ուզենայիք խմել ջրամբարից, երբ արտեզյան այս ջրհորն այնտեղ էր:

111 Հիմա ի՞նչ է Կյանքի աղբյուրը: Ի՞նչ է Կյանքի աղբյուրը՝ կենդանի Ջրերի աղբյուրը: Արտեզյան ջրհոր,

որին մենք Այն կուզեինք նմանեցնել։

112 Հիմա ուզում եմ, որ ուշադրություն դարձնեք ջրամբարի և կենդանի ջրի աղբյուրի միջև եղող տարբերությանը. արտեզյան ջրհորին և հին կոտրված ջրամբարին, որը լցված է փայտոջիլներով, մողեսներով, գորտերով, մանրէներով և այլ նման բաներով, հասկանո՞ւմ եք։

113 Եվ ահա արտեզյան ջրհոր։ Հիմա նայեք սրան։ Այն ինքնահամալրվող է։ Մեծ համակարգեր ներգրավելու և խոշոր գումարներ բերելու կարիք չկա։ Դուք կարիք չունեք բազմաթիվ անդամներ հարելու։ Այն օժանդակում է իր անդամներին իրենց մեջ եղող Կենաց Հոգով, գործելով։

114 Ուշադրություն դարձրեք, ջուրը, որ բխում է նրանից, թարմ, մաքուր և վճիտ է։ Ոչ թե ջրամբար, լճացած ինչ-որ բան, որ քառասուն, հիսուն տարբեր ուղեղների կողմից փաստագրվել է, ասելով. «*Սա* ճիշտ է և *դա* ճիշտ է, և *այս* հասկացողությունը», և քվեարկում ու կոչ են անում, ինչպես որ անում են, իսկ հետո հարանվանություն են ստեղծում դրանից։ Սա Աստծո մաքուր, անարատ և անխարդախ Խոսքն է, որը գալիս է Աստծո բազուկից։ Սա իսկական արտեզյան ջրհոր է։

115 Ուշադրություն դարձրեք, նրա ուժի գաղտնքն իր մեջ է։ Մարդը չի կարող գտնել այն։ Ինչ-որ ճնշում ներքևից մղում է նրան վերև։

116 Ես հիշում եմ, երբ Ինդիանա նահանգի Հարիսոնի շրջանում խաղապահ էի, անցնում էի մի ջրհորի, աղբյուրի մոտով։ Այն միշտ հորդում էր։ Եվ, ոհ, թվում էր, թե դա ամենաերջանիկ բանն էր։ Ձյուն լիներ գետնին, թե սառույց, սառցակալած էր, ինչքան էլ ցուրտ լիներ, այն միշտ հորդում էր, երբ մարդու ձեռքով պատրաստված լճերն ու ջրամբարները գորտերով և ամեն տեսակի այլ բաներով, սառցակալել էին։

117 Դա ցույց է տալիս, որ ցանկացած հարանվանություն Հոգու փոքրիկ բացակայության կամ մթնոլորտի մի փոքրիկ փոփոխման դեպքում կսառցակալի։ Բայց Աստծո արտեզիան ջրհորը, Նա…Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան, այն մի կողմ է նետում բոլոր բաները և դուրս մղում։ Այնտեղ հենց սկզբից էլ ոչինչ չի եղել։ Եվ ցանկացած բան, որ ընկնում է դրա մեջ, այն դուրս կնետի ճանապարհից։

118 Այդ աղբյուրը հորդում էր այդպես, և ես ասացի, նստեցի մի օր այնտեղ և մտածեցի. «Կարծում եմ, ես մի պահ կխոսեմ այդ աղբյուրի հետ»: Գլխարկս հանեցի և ասացի. «Ի՞նչն է քեզ այդքան ուրախացնում: Ինչի՞ց ես այդպես հորդում: Գուցե պատճառն այն է, որ եղնիկներն են երբեմն խմում քո ջրից»:

Եթե այդ աղբյուրը կարողանար խոսել, կասեր. «Ոչ»:

Ես ասացի. «Գուցե այն, որ ես եմ խմում քո ջրից»:

«Ոչ»:

119 Ես ասացի. «Լավ, ուրեմն ի՞նչն է քեզ այդպես մաքուր ու վճիտ դարձնում»: Ի՞նչ...ի՞նչն է, որ հորդում, որ ստիպում է քեզ հորդել, միշտ ուրախությամբ լեցուն ես և ոչինչ չի կարող քեզ սառեցնել: Դու ցայտում ես և այնտեղ ոչինչ չկա, վճիտ ջուր է»:

120 Եթե նա կարողանար պատասխանել ինձ, գիտե՞ք այդ աղբյուրն ի՞նչ կասեր: Նա կասեր. «Բրանհամ եղբայր, ոչ թե ես եմ հորդում, այլ իմ մեջ գտնվող ինչ-որ բան է ինձ ստիպում հորդալ»: Եվ հենց այդպես է...Դա թույլ խոսք է, բայց դուք գիտեք, թե ինչ եմ ուզում ասել:

121 Եվ հենց այդպես է վերստին ծնունդի փորձառության հետ: Դուք չեք կարող այն զսպել: Դա աղբյուր է ձեր մեջ, որ բխում է հավիտենական կյանքի համար: Տեսնում եք, դրա մեջ մի բան կա, որի հետ դուք ոչ մի կապ չունեք: Մարդու ձեռքով պատրաստված ջրամբարները կարող են սառցակալել, և նրանք կխնդրեն արթնության համար և այլն, բայց այն մարդը, ով այդ Աղբյուրի տակ է, ապրում է այդ Աղբյուրի մեջ. դա օր ու գիշեր է: Ոչ, դուք կարիք չունեք սպասելու տեղական անձրևներին և արթնություններին: Դուք լի եք դրանով: «Ես կտամ նրան Կյանքի աղբյուր, որ բխում է նրա մեջ»: Նրա մեջ մի բան կա, որն ամեն օր թարմ, մաքուր և վճիտ է: Դա Աստծո անխարդախ Խոսքն է ձեր սրտում և շուրթերում, որ հաստատում է Իրեն Ինքն Իր մասին խոսելով: Ինձ համար մեկ է՝ անձրև է գալիս, թե ձյուն, թե ինչ եղանակ է, դուք ուրախ եք, որովհետև Սուրբ Հոգին այնտեղ հորդում: Սա թաքնված Զորություն է: Ուշադրությո՛ւն դարձրեք: Ո՛հ, նրա գաղտնիքը նրա մեջ է:

122 Այն իրենից տալիս է անհատույց ամեն կամեցողին, ով ցանկանում է խմել և օգտագործել իր պարունակությունից: Դուք չեք ընտրում և ասում. «Դե, արթնության համար ես պետք է հիմա մեթոդական

եկեղեցի գնամ, որովհետև ես մեթոդական եմ: Ես *այստեղ* պետք է գնամ, բայց (եթե) ես պետք է հոգեգալստական եկեղեցի գնամ, որովհետև ես հոգեգալստական ծնունդ եմ»: Ասում եմ ձեզ, երբ դուք ունեք այդ բխող Աղբյուրը, այդ Ծատրվանը, երբ խմում եք այնտեղից, տարբերություն չկա, դուք տալիս եք ցանկացածին, ով անցնում է կողքով: Դուք կամենում եք Կյանքի հույս տալ կաթոլիկին, բողոքականին, հրեային, աթեիստին կամ ով էլ որ լինի: Ձեր մեջ իսկապես, իրոք մի Բան կա, որն անում է դա:

123 Նկատեք մեկ այլ բան դրա վերաբերյալ, կարիք չկա, որ պոմպով մղեք այն: Կարիք չկա դույլով քաշեք և պոմպով մղեք այն: Ես այնքան շատ եմ տեսել դրանից, ինչ-որ բան պոմպով մղելը, որ մինչև կոկորդս կուշտ եմ. մի փունջ երաժշտություն նվագելը, ցատկելը, կամ—կամ մի մեծ խումբ գրականություն քաղաքում, և հսկայական մեծ պլակատներ. «Այս ժամի մարդը»:

124 Կա միայն մեկ ժամի Մարդ, և դա Հիսուս Քրիստոսն է, Ով նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Կա միայն մեկ Պատգամաբեր Աստծուց, և դա...դա Հիսուս Քրիստոսն է: Այո՛, պարոն:

125 Կարիք չկա բարձրացնել կամ իջեցնել: Կամ ոչ...կարիք չկա, որ միանաք դրան: Դուք պարզապես վերցնում եք այն ձրի: Ամեն: «Ես եմ կենդանի ջրի Աղբյուրը. դուք Ինձ լքեցիք, որ գնաք և ձեզ համար ջրամբարներ պատրաստեք»: Հիմա, կարիք չկա, որ մղեք, պոմպով ջուրը մղեք, դույլով քաշեք, միանաք դրան, փորեք, ոչինչ: Դուք պետք է պարզապես ձրի վերցնեք դրանից:

126 Քամիչ լաթի համար դուք կարիք չունեք մարդկանց ձեռքով ստեղծված ինչ-որ աստվածաբանության, որ ձեզ ասի, թե ինչ է անցել դրա միջով և ինչ է արել այն: Ոչ մեկը: Ինչ-որ կրթական համակարգի մարդու ձեռքով ստեղծված ինչ-որ աստվածաբանություն, *սրա, նրա* մեջ արդարացնող կրոն, կրոնական համակարգի ինչ-որ ջրամբար, դուք դրա կարիքը չունեք: Այն չպիտի գտնվի այնտեղ: Դրեք լաթը Դրա վրա, այն մի կողմ կնետի դա: Այն դրա հետ ոչ մի կապ չունի: Այն ինքնահամալրվող է: Դա Աստծո Զորությունն է, որ բխում է կյանքի համար: Ինչո՞ւ մարդ պիտի նման Բանը թողնի, միանա համակարգին, դա ավելին է, քան ես կարող եմ ասել: Այն որևէ քամիչ լաթի կարիք չունի: Այն դրա կարիքը չունի: Այն կարիք չունի

կա-...տեղական անձրևների կարիք չունի լցվելու համար: Այն միշտ լիքն է: Ամեն:

127 Մի մարդ, ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Ես վիատված եմ»: Ո՛հ, Աստված իմ:

128 Ո՛հ, ես ուրախ եմ, որ ապրում եմ Աստծո ներկայության մեջ, անկախ նրանից՝ ամեն ինչ ճիշտ է ընթանում, թե ոչ: Նա է իմ կյանքը: Ամեն: Նա մեր կյանքն է: Նա է Կյանքը՝ լիարժեք Կյանքը: Այո՛, պարոն: Եվ...և տեսեք, թե ինչ է նա անում մեզ համար: Նրա ուժն ու մաքրությունն Իր մեջ է: Այն ջրամբարից կամ որևէ այլ համակարգից լցվելու կարիք չունի:

129 Ինչ-որ մեկը կասի. «Դե, ո՞ւր է ձեր անդամության քարտը: Եկեք տեսնենք՝ արդյո՞ք լավ մկրտական եք: Ես կտեսնեմ՝ թե արդյոք քարտ ունեք»: Կամ—կամ «...լավ հոգեգալստական...եթե միադավան եք....երկդավան... եռադավան»: Կամ—կամ «....Էլի ինչ-որ մեկը»: Տեսնում եք, այն լցվելու կարիք չունի: Այն միշտ գործում է: Այո:

130 Դուք գիտեք, ես մի ժամանակ ունեցել եմ այս հին ջրամբարից, ես պետք է ջուրը լցնեի այնտեղ և լցնեի, լցնեի, լցնեի այդ հին քաշող պոմպով, որ այն հանեմ այնտեղից: Գիտեք, մի քիչ ավելի շատ ես ջուր լցնում դրա մեջ և պարզապես մի փունջ բզեզներ և նման բաներ դուրս ես հանում, միջատներ և նման բաներ այնտեղից: Այս համակարգված արթնություններից մի քանիսը հենց դա են:

131 Բայց գոհություն Աստծուն. «Արյունով լցված մի Աղբյուր կա, որի մեջ սուզվում են մեղավորները»: Դուք նրանց ոչ թե եկեղեցու անդամներ եք դարձնում, այլ քրիստոնյաներ, երբ նրանք գալիս են այդ Աղբյուրի մոտ:

132 Ինչո՞ւ լքեք կենդանի ջրերի Աղբյուրը, որ նման աղբահորից խմեք:

133 Ոչ մի մղում պոմպով: Նրա ուժն Իր մեջ է: Այն լցվելու կարիք չունի, այո՛, պարոն, որովհետև (Ինքն) Իր Կյանքը Իր մեջ է: Այդպես էլ Աստծո Սերմն է մարդու սրտում: Աստծո Կյանքը անհատի մեջ է, ոչ թե եկեղեցու մեջ, ձեր մեջ է, այն ձեր մեջ է, դուք եք այն մեկը, ով իր մեջ կյանքի սաղմն ունի:

134 Ընդամենը մի ճաշակում դրանից կհամոզի բոլոր տեսակի հոգևորականներին: Հարցրեք կաթոլիկ քահանային, հարցրեք մկրտականին, ով էլ որ լինի: Ընդամենը մեկ ճաշակում այս փառավոր թարմ

արտեզյան ջրից, ասում եմ ձեզ, կիամոզի, որ Դա Ճշմարտություն է: Ամեն դեպքում ձեր քաղցած հոգին, այն ամեն դեպքում համոզում է փափագողին: Եթե ծարավ չեք...Այս մկրտականը սկզբից ծարավ չէր, բայց երբ ծարավեց, ջուրը բավական լավն էր: Դա ճիշտ է, բայց դուք պետք է ծարավ լինեք, «օրհնյալ ծարավ», ինչպես Հիսուսը դա անվանեց: «Երանի նրանց, ովքեր արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագենան»: Ամեն: Հիսուսն է այդ ասում, բարեկամ: Այո՛, պարոն, սա օրհնյալ Աղբյուր է ծարավների համար:

135 Ինչո՞ւ պիտի որևէ մեկը ուզենա փոխարինել այն ճահիճով: Ինչպե՞ս պիտի ուզեք արտեզյան ջրհորը փոխել ճահճի ջրի հետ՝ լի փայտոջիլներով և մարդկանց ձեռքով ստեղծված բոլոր տեսակի տեսությունների աղտոտվածությամբ, մինչդեռ Աստված ասել է, որ. «Եթե մեկը մի բան ավելացնի Իր Խոսքին կամ պակասեցի, նրա բաժինը կհանվի Կենաց Գրքից»:

136 Եվ երբ Աստված խոստացավ, որ կհաստատի այս Խոսքը յուրաքանչյուր սերնդում. «Որովհետև այս խոստումը ձեզ ու ձեր զավակների համար է, նաև այն հեռավորների համար, ում մեր Տեր Աստված կկանչի», ինչո՞ւ պիտի մի քանի համակարգված ջրհան մտցնես, որ աղտոտված են տարիներ շարունակ ինչ-որ հին մանանայից: Գուցե մանանան լավն էր, ոչ մի բան չունեմ դրա դեմ, Մարտին Լյութերի, *սրա, նրա* և մյուս ռեֆորմատորների օրերում, ոչ մի բան չունեմ դրա դեմ, բայց դա մանանա էր, որը շատ վաղուց էր թափվել:

137 Եթե ուշադրություն դարձնենք, Աստվածաշնչում, նրանք ամեն օր պետք է հավաքեին դա: Նրանք պետք է ստանային նորը: Մի քիչ հնանալուց հետո, այն նեխում էր: Այն չի կարող փչանալ առանց քայքայվելու: Որպեսզի նեխի իր մեջ պետք է մանրէ կամ ինչ-որ բան պարունակի: Մենք գիտենք, որ դա այդպես է:

138 Այդպես էլ համակարգերն են: Մի մեծ արթնությունից մեկ այլն այնտեղ մնալուց հետո, աղտոտվում և լցվում է փայտոջիլներով, և ջրամբարի նման լի շերեփուկներով, ինչպես մենք անվանում էինք դա, փոքրիկ միջատներ, որոնք վխտում են այնտեղ:

139 Ահա թե ինչում է այսքան շատ մարդկանց փորձառության խնդիրն այսօր: Նրանք...նրանք պարզապես լցված են շերեփուկներով, որոնք շարժվում

են մեկից մեկը և մեկից մյուսը, պատմելով հեքիաթներ, որոնց մեջ ամենևին էլ Ճշմարտություն չկա: Դա ճիշտ է, շրջելով մեկից մյուսի մեջ. «Ես մեթոդական եմ եղել, ես միացել եմ մկրտականներին, Ես կաթոլիկ եմ եղել, ես *այս* եմ եղել, *այն* եմ եղել»: Սրանք պարզապես շերեփուկներ են:

140 Ոհ, մոռացեք ամենը և եկեք Աղբյուրի մոտ (ամե՛ն), արտեզյան Ջրհորի մոտ, Քրիստոսի հավերժ կենդանի ներկայությանը: Ես հավատում եմ, որ Նա Կյանքի անսպառ Աղբյուր է: Ինչքան շատ ես վերցնում Նրանից, այնքան ավելի թարմ, սառը, լավ և քաղցրահամ է այն դառնում: Երեսուն երեք տարի է ծառայում եմ Նրան, և օրեցօր Նա ավելի քաղցր է դառնում, քան երեկ: Ես երբեք...Նա ասաց, որ երբեք չեք ծարավի, եթե խմել ենք այս Ջրից: Ուշադրություն դարձրեք, թե որքան հրաշալի է Այն: Ո՛հ:

141 Իսրայելը վարվեց այնպես, ինչպես շատերն են վարվում այսօր, նրանք լքեցին կենդանի ջրերի աղբյուրին, որ գնան իրենց համար ջրամբարներ փորեն:

142 Հիմա խոսելով մի պահ շնորհքի մասին, թե ինչ է Աստծո շնորհքը: Մենք ունենք օրենքներ և կանոնադրություն. «Եվ եթե դուք չեք համապատասխանում այդ ստանդարտներին... Ես ունեմ կրոնական չափման նշաձող, եթե չեք համապատասխանում դրան, ինչին պետք է համապատասխանեք, չես կարող մտնել», և այլն: Բայց Աստված Իր շնորհքով է մեզ փրկում, ոչ թե չափման նշաձողով: Հասկանո՞ւմ եք: Բայց Աստված, խոսելով հիմա շնորհի մասին, թե ինչպես է դա տեղի ունեցել, խմելով Նրանից, այս չափման նշաձողից...

143 Տրտունջ, տրտնջացող Իսրայելը: Տեսեք, Նա ասաց. «Եվ Ես դարձյալ կայցելեմ ձեզ»: Ուշադրություն դարձրեք Սուրբ Գրքում: Ուշադրություն դարձրեք, Նա պատրաստվում է փորձել նրանց, որպեսզի դարձյալ այցելի նրանց: Տրտնջացող Իսրայելը Կարմիր ծովի մոտ հրավիրվեց հետևելու Նրան լճացած եգիպտական ջրերի միջով, որպեսզի ազատ ժողովուրդ լինի: Նրանք ստրուկներ էին: Նրանք հրավիրվեցին անցնել, որպեսզի ազատ ժողովուրդ լինեն Նրա հետ: Անցնել Մեռյալ ծովի միջով, Մեռյալ ծովի, ավելի ճիշտ, Կարմիր ծովի միջով, դուրս գալ դրա միջից, որպեսզի մտնեն անապատ, որ

բաժանում բերեն նրանց և նմանակողների միջև, ովքեր առանց թլփատության փորձում էին նմանակել դա:

144 Ոհ, ահա թե ինչը դարձավ խնդիրների պատճառ: Բոլորն էլ՝ փառավոնն ու իր զորքը, կործանվեցին հենց անա-...ավելի ճիշտ, հենց...հենց ծովում: Նրանք տեսան մարդկանց գերբնական Ուժով քայլելիս, ուստի ետ դարձան և փորձեցին նմանակել այն՝ առանց այդ օրհնության մեջ ներգրավված լինելու: Եվ երբ նրանք այդ բանն արեցին, կործանվեցին: Սա մարմնային նմանակում է:

145 Մարդ, ով փորձում է դա անել, փորձում է ինչ–որ բան նմանակել, ուրեմն նա իսկական քրիստոնյայի մամնային նմանակումն է անում:

146 Իմ այնտեղի հնդիկ եղբայրը գիտի դա: Ճրջեք Բոմբեյով և կտեսնեք այնտեղ մարդկանց՝ հնդիկներին և այլոց, պառկած մեխերի վրա...քայլելիս ապակու վրայով և...և անցնելիս կրակի միջով, որ ցույց տան այն, ինչ նրանք կարող են անել և նման...Սա այնտեղ ջունգլիներում գտնվող ինչ–որ մարդու մարմնային նմանակումներն է, որ արվում է ի զոհաբերություն իր աստծուն:

147 Մենք տեսնում ենք ողջ կրոնական կյանքում մարմնային նմանակումներ, ինչ–որ մեկը փորձում է մեկ ուրիշի նման լինել: Կա միայն մեկ օրինակ, որին պետք է նմանվեք, դա Հիսուս Քրիստոսի նման լինելն է, Ով Խոսքն էր: Իսկ հետո, երբ Աստծո Խոսքը գա ձեզ, դա կլինի նույն կերպ:

148 Բայց ամեն դեպքում Աստված տարավ նրանց ուղիղ դեպի խոստացված Երկիր: Նրանք էլ տեսան, երբ իրենց ճանապարհորդության ժամանակ սկսեցին քայլել անապատի միջով, այն բանից հետո, երբ բաժանվեցին, տեսան, որ բոլոր ջրամբարները չորացած էին նրանց համար:

149 Դուք էլ նույն բանը կհայտնաբերեք, եղբայր, երբ սկսեք այս ճանապարհորդությունը դեպի խոստացված Երկիր: Դուք կհայտնաբերեք դռները փակ: Ինչպես անգլիացի այդ եղբայրն ասաց կամ ով էլ որ էր, և, առաջին բանը, որ իմանում ես, այն է, որ իր եկեղեցին վռնդել է նրան: Տեսնում եք, քանի դեռ նա ձգտում էր, որ շատերը ստանան Սուրբ Հոգին, դրանով ամենն ավարտվեց:

150 Եվ մենք...և Իսրայելը, որպես օրինակ, նույն բանը հայտնաբերեց իրենց ճանապարհորդության ընթացքում

դեպի խոստացված Երկիր: Բոլոր ջրամբարները չորացած էին: Այո, իրենց ճանապարհորդությունն Իր խոստացած Խոսքի համաձայն, իրենց ճանապարհորդության ընթացքում նրանք հայտնաբերեցին ջրամբարները չորացած: Նրանք ճանապարհորդության ժամանակ տեսան, որ չեն կարող վստահել ջրամբարներին:

151 Եթե դուք էլ պատրաստվում եք ճանապարհորդել Աստծո Խոսքին հնազանդվելով, և փորձեք *այս* կամ *այն* բանին հարել, կհայտնաբերեք, որ չկա աշխարհում մի ջրամբար, որ կաջակցի Այն: Ամենևին: Դուք անհատ եք: Աստված ձեզ տանում է այն ճանապարհով, որով ուզում է ձեզ տանել: Մենք նույն բանը հայտնաբերեցինք այսօր, և բոլոր ջրամբարները չորացած են:

152 Բայց Աստծո համար, Ով պահում է Իր խոստումն Իր ժողովրդի նկատմամբ, խոստումը միշտ ճշմարիտ է: Նա խոստացել էր հոգալ այն ամենի մասին ինչի կարիքը նրանք կունենան, ուստի Նա արեց դա: Պարզապես մտածեք այդ մասին. տրտնջացող Իսրայելը իր ճանապարհորդության ընթացքում անապատում, դատարկ, չորացած ջրամբարների մեջտեղում: Նա մի կողմ է կանչում Իր ծառա–առաջնորդ Մովսես մարգարեին և զարկված Ժայռի միջոցով կենդանի ջրի աղբյուր է բացում, որպեսզի Իր հավատացյալ զավակները չկորսվեն:

153 Ինձ համար այսօր դա խոսում է շնորհքի մասին: Մենք անարժան ենք: Մենք մեր արած, ապրած կյանքով, անարժան ենք:

154 Բայց Աստված այս օրերում, ինչպես հենց այստեղ այս առավոտ, տեսեք, Աղբյուր է բացել մեթոդականների, մկրտականների, երիցականների, կաթոլիկների և բոլորի համար: Եբրայեցիս 13–ը ապացուցում է դա, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Դա…դա ճշմարիտ է դարձնում Հովի. 3:16. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

155 Եվ այն բարձրացվեց մի քանի պատճառով՝ որովհետև մարդիկ տրտնջում և մեղանչում էին, և օձերը խայթում էին նրանց և նրանք մահանում էին, և իրենց մեղքերի ներման և իրենց հիվանդությունից բժշկվելու համար:

156 Եվ դա նույն Աղբյուրն է, որ բաց է այսօր մեզ

համար՝ մեր փրկության և մեր բժշկության՝ ֆիզիկական բժշկության համար: «Որովհետև Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»:

157 Եվ երբ Ժայռին, որ զակրված էր Աստծո խոստացված Խոսքի միջոցով, հրաման տրվեց, մաքուր վճիտ ջրի շատրվաններ դուրս եկան, ոչ...ոչ թե լճացած, աղտոտված, այլ Աստծո սեփական ներկայությունը: Վճիտ ջուր, և այն փրկեց բոլոր նրանց, ովքեր դրանից խմեցին: Մենք հիմա գիտենք, որ դա ճշմարտություն է, որովհետև կարդում ենք դա որպես խորհրդապատկեր Հին Կտակարանում:

158 Հիմա, դուք կարիք չունեք դույլով ջուր քաշելու, պոմպով մղելու, դրան միանալու, ճեմարան հաճախելու, որ սովորեք, թե ինչպես օգտագործեք այն: Այնտեղ ձեզ կասվի, թե ինչպես օգտագործել այն, հասկանո՞ւմ եք. «Ո՛հ, դե, դուք, եթե դուք ստացել եք Սուրբ Հոգին, մենք հավատում ենք դրան, բայց դուք...դուք *այսպես* արեք սա»:

159 Բայց տեսնում եք, դրա վերահսկողությունը չկա: Ոչ թե դուք եք օգտագործում Սուրբ Հոգին, այլ Սուրբ Հոգին է օգտագործում ձեզ, հասկանո՞ւմ եք: Տեսեք, դուք չէ...դուք չէ, որ պետք է օգտագործեք Սուրբ Հոգին, Սուրբ Հոգին է տիրում ձեզ: Պարզևն այն չէ, որ վերցնում եք ինչպես դանակը և սրում եք մատիտը դրանով: Դա հանձնվելն է Աստծուն և ձեզ ճանապարհից հեռացնելն է, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա օգտագործել ձեզ:

160 Ուշադրություն դարձրեք, նրանց կարիք չունեին պոմպով ջուրը մղելու, կամ դույլով քաշելու, կամ հարցնելու. «Մենք հիմա ինչպե՞ս ենք այս ջուրը օգտագործելու»: Որովհետև նրանք գիտեին ինչպես օգտագործել այն: Նրանք ծարավ էին: Նրանք գիտեին ինչ անել դրա հետ:

161 Այդպես էլ տղամարդը կամ կինն է, անկախ նրանից, թե որ հավատամքին կամ հարանվանության է պատկանում նա: Եթե նա Աստծուն ծարավ է, կարիք չունի հետ վազելու ճեմարան, ինչպես անցած երեկո անգլիացի կամ բրիտանացի այս եղբայրն արեց, որ պետք է վերադառնա և խորհուրդ հարցնի անգլիական եկեղեցուց, թե ինչպես պետք է կիրառի այն մեծ պարգևը, որ ստացել է՝ լեզուներով խոսելը, և թե ինչպես պետք է անի *սա*: Նրան հենց սկզբից էլ կվոնդեյին: Հասկանո՞ւմ եք: Նա ծարավ

էր, Աստված էլ հագեցրեց նրան։ Ահա և վերջ։ Կարևորը ծարավելն է, այդ ժամ Նա կհագեցնի։

162 Դուք կարիք չունեք որևէ վերահսկողության, ինչ-որ մեկը ձեզ ասի, թե ինչ անեք դրա հետ։ Աստված յուրաքանչյուր անհատին առաջնորդում է այնպես, ինչպես Նա է ուզում, որ դուք անեք։ Դուք ինքներդ անհատ եք։ Դուք Աստծո մասնիկն եք։ Ոչ ոք չի կարող ձեր տեղը գրավել։ Եվ ոչ մի կարիք չկա ինչ-որ մեկի մոտ գնալ և ասել, որ ես ստիպված կլինեմ «սրա հետ *սա* անել» կամ պետք է «դրա հետ *դա* անեմ»։ Ո՛չ, պարոն։ Աստված օգտագործում է այն այնպես, ինչպես որ, որ Նա է ցանկանում։ Երբ դուք ծարավ եք, բավականաչափ գիտեք, որ խմեք։

163 Եվ եթե այսօր ծառավ եք, խմեք դրանից, դա է ամենը, ինչ դուք պետք է անեք։ Աստված իրենց ծարավի համար ճանապարհ է նախատեսել որ ծարավ զավակներն ձրի ճաշակեն Իրենից։ Եվ այս առավոտ Աստված ճանապարհ է նախատեսել յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար, ով քաղցած ու ծարավ է։ Գուցե այստեղ մարդիկ կան նստած, ովքեր երբեք փրկված չեն եղել։ Այստեղ կան նստած մարդիկ, ովքեր փրկվելու շեմին են։

164 Այստեղ կան մարդիկ, ովքեր նստած են այստեղ որպես եկեղեցու անդամներ, դուք ուզում եք ճիշտ վարվել, բայց խմում եք ջրամբարից։ Նրանք երբեք ձեզ չեն ասի այս Ճշմարտությունները։

165 Միակ գալու բանն է, Աստծո խոստումը ընդունել և այդ Աղբյուրի մոտ գալն է, այդ ժամանակ Նա կհագեցնի ծարավը։ «Նա, ով խմի այս Աղբյուրից, հավիտյան չի ծարավի»։

166 Այժմ ուշադրություն դարձրեք, թե ինչպես...Նա ինչպես ազատեց Իր...Իրեններին, ովքեր շնորհքի և ոչ թե համակարգի կամ կրթական ջրամբարի միջոցով ընդունեցին այս ջուրը։ Նա հաստատում է, որ Իր Խոսքը Կյանք տվող աղբյուր է։ Այստեղ ձեզանից քանի՞սը գիտեն, որ Կյանք են ստացել, երբ ընդունել են այս Խոսքը և Իր ջուրը, գիտեն, որ կյանք են ստացել։

167 Եկեք վերցնենք, դե, օրինակի համար ևս մեկ կամ երկու օրինակ, իսկ հետո մի րոպեից կվերջացնեմ։ Ես... ես պետք է որ այդ կոճակն ինչ-որ տեղ ունենամ։ Բայց ուշադրություն դարձրեք։ Ես շարունակում եմ խոսել,

բայց ես չեմ ուզում անել դա: Տեսեք, եկեք օրինակի համար վերցնենք մի երկու հոգու:

168 Վերցնենք Հակոբի ջրամբարի՝ փորած ջրհորի մոտ կագնած կնոջը: Նա նստած էր այնտեղ: Այն ամենը, ինչ այդ կինը գիտեր, այս ջրամբարն էր, որտեղ նա գալիս էր ջուր հանելու: Եվ ջրհորի դիմաց, այնտեղ՝ փոքրիկ համայնապատկերում, գտավ հրեա մի Մարդու նստած այնտեղ: Իսկ նա սամարացի էր, դա Սյուքար քաղաքն էր: Եվ մենք տեսնում ենք որ այս Մարդը՝ այս հրեան, անսովոր Խոսք ասաց այս կնոջը, ասաց. «Ինձ ջուր տուր խմեմ»:

169 Նա ասաց. «Մեր մեջ խտրականություն կա: Դու չպետք է ինձանից դա խնդրեիր, որովհետև դու հրեա ես, իսկ ես՝ սամարացի»:

170 Նա ասաց. «Բայց եթե դու իմանայիր, թե Ով է Նա, որ քեզ ասում է՝ Ինձ ջուր տուր, ապա ինքդ Ինձանից կխնդրեիր, և Ես քեզ ջուր կտայի, որ չգաս այս ջրնորից խմելու. քո մեջ հորդող ջրի աղբյուր կլինի»: Ուշադրություն դարձրեք, երբ նա տեսավ, որ սա ապացուցված է, որ Ճշմարտութուն է:

171 Հիմա, առաջինը, ցանկացած մարդ կարող էր դա ասել: Բայց նա ասաց. «Մենք երկրպագում ենք այս սարի վրա, իսկ դուք՝ Երուսաղեմում»:

172 Նա ասաց. «Փրկությունը գալիս է հրեաներից: Մենք գիտենք, թե ինչին ենք հավատում, բայց,— ասաց,— թույլ տուր քեզ մի բան ասել,— այսպիսի խոսքերով,— ոչ այս լեռան վրա, ոչ էլ Երուսաղեմում: Որովհետև ժամանակ կգա, երբ մարդիկ Աստծուն կերկրպագեն Հոգով ու Ճշմարտությամբ, որովհետև Աստված այդպիսիներին է փնտրում»: Նա ասաց. «Գնա ամուսնուդ կանչիր և այստեղ արի»: Տեսեք, ահա ապացուցվեց դա: Ահա ցույց է տալիս, թե ինչ աղբյուրի մոտ էր նա: Ասաց. «Գնա ամուսնուդ կանչիր ու այստեղ արի»:

Կինն ասաց. «Ես ամուսին չունեմ»:

173 Նա ասաց. «Դու ճիշտ ասացիր»: Տեսնում եք, դա կարծես ակնհայտ հակասություն էր այն բանի, ինչ Նա հարցրեց իրեն և ասաց. «Գնա ամուսնուդ կանչիր»:

Ասաց. «Ես ամուսին չունեմ»:

174 Ասաց. «Դու ճիշտ ասացիր,—ասաց,— որովհետև դու հինգ ամուսին ես ունեցել, և նա, ում հետ հիմա ապրում ես, քո ամուսինը չէ»:

175 Նայեք այդ կնոջը, ինչքա՜ն էր տարբերվում այդ օրվա քահանաներից։ Այդ օրվա քահանաները տեսան, որ նույն բանը կատարվում է և ասացին. «Դա դևն է, հեռազգացություն է, կամ...կամ Բեեղզեբուղն է»։ Տեսնում եք, նրանք չկարողացան տեսնել, որ Խոսքում խոստացված էր դա։

176 Բայց այդ խեղճ կինն ավելի տեղյակ էր Գրություններից, քան քահանաներից որևէ մեկը։ Նա ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ Դու մարգարե ես։ Մենք չորս հարյուր տարուց ի վեր՝ Մաղաքիայից սկսած, մարգարե չենք ունեցել, բայց,— ասաց,— մենք սպասել ենք մարգարեին և գիտենք, որ Մեսիան պիտի գա։ Եվ երբ Նա գա, հենց այս է անելու»։

Հիսուսն ասաց. «Այդ Ես եմ»։ Ամե՛ն։

177 Ուշադրություն դարձրիք, նա թողեց իր դույլը Հակոբի ջրհորի մոտ և վազեց քաղաք. արտեզյան ջրհորով լի։ Նա տեսավ դա կատարելապես հաստատված, և Նա այդ Կյանքի Աղբյուրն էր։ Թույլ տվեք նրան ներկայացնել ձեզ։ Նա թողեց դա, երբ ապացուցվեց, որ Նա է Կյանքի Խոսքը։ Նա թողեց դա և հայտնաբերեց, որ նույն Ժայռը, որ զարկվեց անապատում, ապացուցվեց, որ այդ ժամանակ ներկա էր։

178 Թույլ տվեք ասել, որ նույն Աստված, որ եղել է անցած օրերում, որի մասին այնքան խոսում ենք, հիմա այստեղ ներկա է, ոչ թե ինչ-որ աստվածաբանական հասկացողությամբ, այլ Նրա հաստատման անձնական գիտությամբ, որ այս վերջին օրերում Նա թափելու է Իր Սուրբ Հոգին Իր եկեղեցու վրա։ Նա «Ես եղել եմ» չէ։ Նա դեռ «ԵՍ ԵՄ»-ն է, միշտ ներկա ժամանակով։

179 Այդ դեպքում ջրամբարն իր համը կորցրեց։ Այդպես էլ ամեն մարդ, ով երբևէ ընկնում է Աստծո զորության մեջ Սուրբ Հոգու մկրտությամբ, հարանվանական համակարգերը կորցնում են իրենց համը։ Դուք այլևս չեք ուզում այդ լճացած գորտերից, մողեսներից, փայտոջիլներից և այլ նման բաներից։ Դուք խմում եք մի Աղբյուրից, որը թարմ ու վճիտ է, Աստծո Խոսքը, որն ամեն ժամ թարմ է ձեր հոգում։ Նույնն ինչպես հիմա է, երբ Խոսքն ապացուցված է, որ Ճշմարտություն է, ճաշակեցեք և տեսեք, թե արդյոք դա ճիշտ չէ։

180 Թեև ջրամբարը լավ էր ծառայել, իր ժամանակին լավ ծառայել էր, բայց տեսնում եք, Կյանքի Աղբյուրն էր

այնտեղ, այլևս ոչ թե Հակոբի ջրհորը, որպես հոգևոր խմելիք: Այն, ինչ նրանք մտածում էին, որ եթե խմել են այդ ջրհորից, ամեն ինչ լավ կլինի, բայց հիմա Կյանքի Աղբյուրն Ինքն էր նստած այնտեղ:

181 Մենք հիմա մեր ունեցած համակարգերի և կազմակերպությունների կարիքը չունենք: Մենք վերջին ժամանակներում ենք: Եվ Աստված խոստացել է այս վերջին ժամանակներում այն բաները, որոնք անելու է: Եվ մենք տեսնում ենք դա մինչև վերջին Խոսքը կատարված: Մենք լսում ենք, թե ինչպես է ռազմական ուժի տեր մարդը վեր կենում, դողում և ասում. «Ինչ-որ բան է կատարվելու»: Մենք զգում ենք, որ Սուրբ Հոգին զգուշացնում է մեզ, որ ինչ-որ բան է կատարվելու: Մենք տեսնում ենք, որ ամեն ինչ կարգավորված է: Ուրեմն, թողեք այդ համակարգը և եկեք Աղբյուրի մոտ: Այո՛, պարոն:

182 Ծառայեց իր նպատակին, բայց հիմա նա դեմ առ դեմ գտնվում էր Ինքնին Աղբյուրի մոտ:

183 Հովհաննեսի 7:37-38-ում՝ տաղավարների վերջին տոնի ժամանակ, Հիսուսն ասաց (Ի՞նչ ասաց Նա). «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա ու խմի»: Հենց աստվածաբանների խմբի շրջանում: «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա ու խմի: Որովհետև Սուրբ Գիրքն է ասում՝ նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»:

184 Ահա կենդանի Աղբյուրը: Դա է այն Աղբյուրը, որ մարդիկ լքել են այսօր: Հավատամքի պատճառով նրանք լքել են կենդանի Ջրի Աղբյուրին: Թույլ տվեք ներկայացնել ձեզ Նրան: Նա ինձ համար...Եվ ես վերջացնում եմ:

185 Նա ինձ համար այն Աղբյուրն է, որ փրկեց Հագարի և երեխայի կյանքը, երբ նրանք մահանում էին անապատում:

186 Ես հավատում եմ, որ Նա է այն Վեմը, Եսայի 32-ում, Նա է այն Վեմը պապակած երկրում: Նա է ապաստարանը փոթորկի ժամանակ:

187 Զաքարիա 13, Նա է այն Աղբյուրը, որը բացվել էր Դավթի Տան համար մեղքից մաքրելու համար: Ես հավատում եմ, որ Նա դա է: Դուք չեք հավատո՞ւմ:

188 Սաղմոս 36:9-ում Նա Դավթի Կյանքի աղբյուրն էր: Նա Դավթի հանդարտ Ջրերն էր և կանաչ մարգագետինները: Նա Դավթի համար Ջուր էր ջրերի հոսանքի մոտ:

189 Ծննդոց 17-ում Նա է Աբրահամի ստնտուն՝ Էլ Ծադդայը: Երբ երբ կյանքը մարել էր նրանում, նա դեռ...ասաց Աստված:

190 «Հարյուր տարեկան մարդ, ինչպե՞ս է դա հնարավոր: Ես ծեր եմ, կինս նույնպես, ինչպե՞ս կարող է դա կատարվել»:

191 Նա ասաց. «Ես եմ Էլ Ծադդայը»: Հիմա, *«Էլ»*-ը նշանակում է «սա»- է, իսկ...իսկ *Ծադդայը*՝ «ստինգ», և Ծադդայը հոգնակի է, որը նշանակում է «Ես եմ ստնտու Աստվածը»:

192 Երեխայի նման, որ անհանգիստ է և հիվանդ, և նրա ուժերը լքում են նրան, փառվում է մոր կրծքին և սնվելով վերականգնում է իր ուժերը: Անկասկած: Ոչ միայն...Երբ կերակրվում է, այլևս չի անհանգստանում: Մոր կրծքին նա բավարարվում է, մինչ վերականգնում է իր ուժերը:

193 Եվ ցանկացած մարդ, որ կընդունի Աստծո խոստումն իր սրտում, որ. «Այս խոստումը ձեզ ու ձեր զավակների համար է, նաև այն հեռավորների համար, ում մեր Տեր Աստված կկանչի», և կհենվի դրա վրա, կվերականգնի իր ուժերը: Անհանգստացող երեխա, հավատա՛ դրան: Սա հավատացողների համար է:

194 Հավատացյալ բանաստեղծին, ես շատ երգեր կարող եմ հիշել, որոնք բանաստեղծները գտել եմ մեզ համար: Նրանցից մեկը մի անգամ ասաց, Նա...

Արյունով լցված մի Աղբյուր կա,
Որ հոսում է Էմմանուելի երակներից,
Որի մեջ մեղավորներն են սուզվում
Ու մեղքերից լվացվում:

Մեռնող ավազակը ուրախացավ,
Որ իր օրում այդ Աղբյուրը տեսավ,
Ես կարող եմ, թեև նրա պես ստոս եմ
Բոլոր մեղքերս լվանալ:

Այն պահինց, երբ աղբյուրը տեսա,
Որ հոսում է Քո վերքերից
Փրկագնող սերդ դարձավ երգիս թեման,
Եվ կլինի մինչև վախճանն իմ կյանքի:

195 Ինձ համար Նա Բաժանման Խոսքի Ձրերն է, որը զատում է ձեզ այն ամենից, ինչ հակառակ է Իր Խոսքին: Ես հավատում եմ, որ Նա է այդ Աղբյուրը: Այո՛, պարոն: Դա, Նա է այն Ձրերը, որ զատել են ինձ մարդու ձեռքով

պատրաստված ջրամբարներից, կենդանի Ջրի Աղբյուրի համար: Ո՛հ, բարեկամ, ես կարող եմ պարզապես... Կարելի է շարունակ թվարկել, թե...թե ինչ է Նա մեզ համար: Նա է Ալֆան և Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Նա է, որ էր, որ է և որ պիտի գա, Դավթի արմատն ու ցեղը, Առավոտյան Աստղը: Նա իմ ամենն է ամեն բանում:

196 Եղբա՛յր, քո՛ւյր, եթե դուք չեք...Պարզապես ամբողջ կյանքում խմել եք այս փոքրիկ մարդու ձեռքով պատրաստված ջրամբարից, ուրեմն ինչո՞ւ այսօր չթողնել այդ ջրամբարը և գալ այս Աղբյուրի մոտ:

197 Խոնարհենք մեր գլուխները մի պահ: Խոնարհած գլուխներով...[Մի քույր սկսում է երգել անծանոթ լեզվով: Չձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. խմբ.]: ... իմ կարծիքով խորանի հրավեր: Քանի՞սը հիմա:

198 Ես...ես նյարդայնացած էի, ես...ես ձեզ երկար պահեցի, ստիպված էի քարոզս մասնատել: Բայց ես հավատում եմ, որ Սուրբ Հոգին ուզում է, որ դուք հասկանաք, թե ինչ եմ ուզում ասել: Տեսեք, այս օրերին Աստծո առջև ուղղվելուց ավելի կարևոր բան չկա, հասկանում եք, մեր ճաշկերույթները, ինչ էլ, որ լինի, ինչ էլ, որ լինի: Տերն այստեղ է: Հիմա, ես առ այսօր կյանքիս մեջ մոտավորապես մի անգամ եմ դա լսել:

199 Հիմա քանի...բոլորդ այստեղ, ոչ թե «քանի»: Բոլոր նրանք, ովքեր ուզում են խմել այդ Աղբյուրից թող մի պահ կանգնեն աղոթքի համար: Աստված օրհնի ձեզ: Տերն օրհնի ձեզ:

200 Հիմա այստեղ գտնվողներից քանի՞սը, ովքեր...ովքեր ներկա են *այսպես* բարձրացած ձեռքով կասեն. «Ո՛վ Աստված, իջիր ինձ վրա, լեցրու ինձ, թույլ տուր խմեմ այս Աղբյուրից: Ես չեմ արել այն, ինչ ճիշտ է, բայց ես... ես ուզում եմ, որ Դու ներես ինձ դրա համար: Ուզում եմ, որ մեղքերն իմ լվաս: Եվ թույլ...թույլ...թույլ տաս ինձ այսօրվանից պարզապես...»? Պարզապես նայեք:

Արյունով լցված մի Աղբյուր կա,
Որ հոսում է Էմմանուելի երակներից,
Որի մեջ մեղավորներն են սուզվում
Ու մեղքերից լվացվում:
Ու մեղքերից լվացվում,
Ու մեղքերից լվացվում.
Որի մեջ մեղավորներն են սուզվում
Ու մեղքերից լվացվում:

201 Հիմա որ, դուք որ քրիստոնյա հավատացյալ եք, ընդունել եք Քրիստոսին որպես ձեր անձնական Փրկիչ, բայց դեռ չեք...Եթե չեք արել դա, ահա Աղբյուրը: Միակ Աղբյուրը, որի մասին ես գիտեմ, դա Էմմանուելի երակներից հոսող Աղբյուրն է: Հիմա, և եթե այստեղ գտնվող ձեզանից շատերը....

202 Սա նման է անցած երեկո փոքրիկ արծվիկի մասին իմ ասածին, որ քայլում էր հավերի հետ հավանոցի բակում: Նա հավերից բացի ոչինչ չգիտեր, բայց նա գիտեր, որ նրա մեջ մի բան կար, որ տարբերվում էր հավերից: Իսկ հետո նրա մայրիկը եկավ նրան փնտրելու, և նա աղաղակեց վերևից: Դա արծվի կանչ էր: Տեսնում եք, նա հենց սկզբից էլ պետք է արծիվ լիներ, այլապես այդ կանչը երբեք չէր ճանաչի: Տեսնում եք, նա...

203 Այնտեղ ինչ-որ բան պետք է բեղմնավորված լինի, այլապես այն չի կարող Կյանք արտադրել: Եվ եթե Սերմը՝ Աստծո Խոսքը, ձեր մեջ է, Սուրբ Հոգին հիմա այստեղ է, որ բեղմնավորի և իրական դարձնի այն ձեզ համար:

204 Քանի՞սն այստեղ չեն ստացել Սուրբ Հոգու մկրտությունը, բարձրացրեք ձեր ձեռքերը: Չորս կողմից, ամենուրեք, պարզապես անկեղծ, եթե չեք ստացել Սուրբ Հոգին և կուզենայիք ստանալ այն, բարձրացրեք ձեր ձեռքը: Որտեղ էլ որ լինեք, պարզապես մի պահ ձեր ձեռքը վեր պահեք:

205 Ես հիմա ուզում եմ, որ շուրջը կանգնածները և իրենց նայողները, ուզում եմ, որ ինչ-որ մեկն իր ձեռքերը դնի նրանց վրա:

206 Ես հավատում եմ, որ Սուրբ Հոգին հենց հիմա կլցնի ձեզանից յուրաքանչյուրին, ով ցանկանում է դա: Մի մտածեք հիմա կաֆետերիայում եղող կերակուրի մասին: Եկեք մտածենք այստեղի այս Կերակուրի մասին: Սա է կերակուրը: Սա է Կյանքը: Հասկանում եք, սա Կյանք է:

207 Հիմա բոլորդ շրջվեք և ձեռք դրեք միմյանց վրա: *«Եվ ձեռքերը նրանց վրա դրեցին»:* Ես հիմա ուզում եմ, որ դուք աղոթեք այն մարդու համար, որի վրա ձեր ձեռքը դրել եք...

208 Մի մտածեք գնալու մասին: Ոչ մի բանի մասին մի մտածեք: Պարզապես մտածեք, որ Սուրբ Հոգին հենց հիմա այստեղ է, որ լցնի յուրաքանչյուր անհատին: Բացեք ձեր սիրտը, թափեք ջրամբարի ամբողջ ջուրը և ասեք.

«Օ՜ կյանքի Աղբյուր, մտիր իմ մեջ։ Լեցրու ինձ, ո՛վ Տեր Աստված, Քո բարությամբ և ողորմությամբ»։

209 Տե՛ր Հիսուս, այդ անսպառ Աղբյուր։ Ես խնդրում եմ, ո՛վ Աստված, որ լցնես նրանցից յուրաքանչյուրին։ Թող Սուրբ Հոգին իջնի այստեղ։ Ես խնդրում եմ, ո՛վ Աստված, որ մոռանանք ամեն ինչի մասին, որ Սուրբ Հոգին հենց հիմա իջնի մեր մեջ և շնորհի մեզ ձրի այդ Կյանքի Ջուրն ամեն տեղից։ Շնորհիր դա, ո՛վ Աստված։ Մինչ աղոթքն ու երգը զուգակցված շարունակվում են, Տե՛ր, իմանալով, որ դա Քո ներկայությունը, Քո Աստվածային ներկայությունն է, մենք ուզում ենք գալ Աղբյուրի մոտ։ Մենք ուզում ենք Սուրբ Հոգու իսկական, ճշմարիտ մկրտությունը։ Տե՛ր, այս մարդիկ աղոթում են դրա համար։ Ես խնդրում եմ, որ հենց այս պահին նրանք լցվեն Աստծո այս բարությամբ։ Շնորհիր դա, ո՛վ Աստված։ Լսիր Քո զավակների աղոթքը։ Իջիր նրանց վրա, թող Աստծո Զորությունը և Սուրբ Հոգին պատի նրանց։ Շնորհիր դա, ո՛վ Աստված։

210 Ո՛հ, որքա՜ն շնորհակալ ենք թարմության, երկնային Զորավոր Աստծո ներկայության համար, որ կանգնած է մեր մեջ։ Հենց այս կեսօրվա ժամին, Տե՛ր, կերակրու մեզ։ Տե՛ր, մենք Քո սեղանից ենք կերակուր ուզում։ Կերակրու մեզ հիմա, Տե՛ր։ Կերակրու մեզ Սուրբ Հոգով մեր կյանքում։ Մեր քաղցած չորացած հոգիները ծարավ են։ Ինչպես Դու ասացիր երգի մեկնության մեջ. «Այն ջուր պիտի թափի չորացած հողի վրա»։ Թող կատարվի դա, Տե՛ր։ Թող Քո Խոսքերը դրսևորվեն Քո զավակների սրտերի մեջ. «Ջուր չորացած և ցամաքած հողի վրա»։ Հավիտենական Աստված, լսիր Քո ծառայի աղոթքը և շնորհիր մեզ այդ Օրհնությունը։ Ամեն։

Ո՜հ, որքան եմ սիրում Հիսուսին,

211 Պարզապես շարունակեք փառք տալ Նրան հիմա։ Տեսեք, Սուրբ Հոգին այստեղ է։ Եթե հիմա չընդունեք Այն, ուրեմն դուք եք մեղավոր։

...որքան եմ սիրում Հիսուսին,
Սիրում ես Ինձ սրանցից ավելի՞։

...սիրում Հիսուսին,
Քանզի Նա ինձ առաջինը սիրեց։

Ո՜հ, որքան եմ սիրում...(Փա՜ռք Աստծուն)
Ո՜հ, որքան եմ սիրում...(Ի՞նչ կլիներ, եթե
Նա հենց այս պահին գար)։
Ո՜հ, որքան եմ սիրում Հիսուսին,

Քանզի Նա ինձ առաջինը սիրեց։

Չեմ ուրանա Նրան երբեք,
Չեմ ուրանա Նրան երբեք,
Չեմ ուրանա Նրան երբեք,
Քանզի Նա ինձ առաջինը սիրեց։

Սքանչելի, սքանչելի է Հիսուսը ինձ համար,
Խորհրդական, Խաղաղության Իշխան, Հզոր Աստված է Նա.
Ո՛հ, փրկում է ինձ, պահում է ինձ բոլոր մեղքերից և անպատվությունից,
Սքանչելի է Փրկագնողն իմ, փառք Նրա…

212 Եկեք հիմա երգենք այս երգը Նրան։

Սքանչելի, սքանչելի է Հիսուսն ինձ համար,
Խորհրդական, Խաղաղութայն Իշխան, Հիզոր Աստված է Նա.
Ո՛հ, փրկում է ինձ, պահում է ինձ բոլոր մեղքերից ու անպատվությունից,
Սքանչելի է Փրկագնողն իմ, փա՜ռք Նրա Անվան։

213 Թող բոլոր նրանք, ովքեր զգում են դա ասեն «ամեն»։ [Դահլիճն ասում է. «Ամեն» Ծան. խմբ.]։ Ո՛հ, ալելո՜ւիա։ Ես տեսնում եմ, թե ինչպես են որոշ մարդիկ անցնում հիմա Սուրբ Հոգով։

Մի ժամանակ ես կորսված էի, իսկ հիմա գտնվեցա, առանց դատապարտության,
Հիսուսը տալիս է ազատութուն և լիարժեք փրկություն.
Փրկում է ինձ, պահում է ինձ բոլոր մեղքերից ու անպատվությունից,
Սքանչելի է Փրկագնողն իմ, փառք…

Եկեք հիմա բարձրացնենք մեր ձեռքերը և իսկապես փառ…

Ո՛հ, սքանչելի, սքանչելի է Հիսուսն ինձ համար,
Խորհրդական, Խաղաղության Իշխան, Հզոր Աստված է Նա.
Ո՛հ, փրկում է ինձ, պահում է ինձ բոլոր մեղքերից ու անպատվությունից,

Սքանչելի է Փրկագնողն իմ, փա՜ռք Նրա Անվան:

214 Սիրո՞ւմ եք Նրան: Ո՜հ, սքանչելի է: Փառք Արյունով լցված այդ Աղբյուրին, որի մեջ մեղավորները կորցնում են մարդկային բոլոր վախերը, մեղադրանքները, պարզապես ազատ են Նրա մեջ: Ալելո՜ւիա: Ո՜հ, Աստված իմ, դա իրոք հրաշալի՜ է:

215 Հիմա մինչ նորից ենք երգում այդ երգը, թույլ տանք բոլոր մեթոդականներին, մկրտականներին, կաթոլիկներին, երիցականներին, ով կա, մինչ երգում ենք այս երգը՝ «Սքանչելի է Հիսուսը ինձ համար», եկեք պարզապես շրջվենք և իրար ձեռք սեղմենք, պարզապես լավ հին միացում ունենանք: Գիտեք, ես...դա այն է, ինչ ինձ դուր է գալիս: Դե, եկեք երգենք սա, մինչ անում ենք դա:

Ո՜հ, սքանչելի, սքանչելի է Հիսուսն ինձ համար,

216 [Եղբայր Դեմոս Ծաքարյանը խոսում է Բրանհամ եղբոր հետ. «Բրանհամ եղբայր, ես հենց նոր լուր ստացա այն մասին, որ նախագահ Ջոնսոնին սրտի կաթվածով շտապ տեղափոխել են հիվանդանոց, գուցե պետք է աղոթենք նրա և մեր ազգի համար»: Ինչ–որ մեկն ասում է. «Մի րոպե սպասենք»: Ծան. խմբ.]:

...սքանչելի է Հիսուսը (Դա ճիշտ է):
Ո՜հ, Խորհրդական, Խաղաղության Իշխան,

217 [Ծաքարյան եղբայրը նորից խոսում է Բրանհամ եղբոր հետ. «Ներեցեք, նորից ներողություն եմ խնդրում, չէի՞ք ցանկանա մի րոպեյով իջնել ցած»: Իրրլ Պրիկետ եղբայրն առաջնորդում է եկեղեցին *Հրաշալի* երգը երգելու մեջ: Ձայնագրված հատված ձայներիզի վրա: Դահլիճը երգում է *«Կա Կյանքի գետ»* երգը: Ձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. խմբ.]:

Աստվածաշունչն ասում է. «Աղոթք արեք իշխանավորների համար»:

218 Մեր Երկնային Հա՛յր, մենք կանգնած ենք հուսահատ կարիքով մեր ազգի առաջնորդի՝ մեր նախագահի համար: Գուցե նա երբեք էլ չիմանա այդ մասին, Տե՛ր, բայց Դու դա գիտես: Ես աղոթում եմ եղբայր Ջոնսոնի համար, քանի որ նա հայտարարում է, որ հավատում է Քեզ: Եվ Հա՛յր, ինչպես հասկանում ենք սրտի կաթվածը հարվածել

է նրան։ Ես խնդրում եմ, ո՛վ Աստված, որ խնայես նրա կյանքը։ Այսպես թե այնպես մենք համընդհանուր ճգնաժամի մեջ ենք հիմա։ Եվ թող Քո Հոգին իջնի նրա վրա, Տե՛ր։ Եվ հենց հիմա հիվանդանոցում կամ որտեղ էլ որ լինի, թող Քո Հոգին իջնի Walter Reed հիվանդանոցի վրա և հպվի իր մարմնին՝ խնայելով իր կյանքը։ Տե՛ր, այս մարդը ճնշման տակ է, ավելի շատ ճնշման տակ է, քան մենք հասկանում ենք։ Ուստի խնդրում ենք, ո՛վ Աստված, որպես հավատացյալներ և որպես այս ազգի մասնիկ, մեր առաջնորդի համար, որ շնորհես նրան երկար կյանք այս փառավոր ժամում Հիսուս Քրիստոսի Անունով։ Ամեն։ 🕊

65-0123 Կոտրված ջրամբարներ
«Ռամադա Ինն»
Ֆենիքս, Արիզոնա ԱՄՆ

ARMENIAN

©2025 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org